№ 206 ԿԻՐԱԿԻ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1915
ՔԱՌԱՍՈՒՆՉՈՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 206

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐՇԱՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի. մասնական 85 կոպ.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Соломоновская ул., № 21.

Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 2—53.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարությունների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20—10 կոպ.

Տպարանի տելեֆոն № 67.

Սօֆիա և Ստեփան Այվազեանները իրանց զաւակներով և Թագան Իսաղուլեան խորին վշտով յայտնում են ազգականներին ու ծանօթներին՝ առաջին երկուսը իրանց թանգագին օրդու, իսկ վերջինը իր սիրելի թոռան՝

ԲԱԳՐԱՏ ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՅՎԱԶԵԱՆՑԻ

(Սալմաստի Փայաջուկ գիւղացի)

վաղաժամ մահը, որ տեղի ունեցաւ օրերս, սեպտ. 18-ին Մարմնի յուղարկաւորությունը այսօր, կիրակի, առաւ. ժամը 10 ին, հանգուցեալի բնակարանից (Հալաթար, Արքանգելսկի փողոց, № 26) դէպի Հալաթի Եղիսաբեթեցոց եկեղեցին Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։
657. 2—2

## ՔԱՄՈՅԵԱՆ ԴՊՐՈՅԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ

յայտնում է, որ շնորհիւ աշակերտուհիների մեծ քանակի՝ բացել է Ա զուգընթաց պատրաստական-դասարան կան սահմանափակ թիւով տեղեր Ա բաժանմունքում։ Աշակերտուհիների ընդունելությունը շարունակվում է։

առ. (ա. օ.) 661. 3—1 ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

## Թիֆլիսի Ժողովարան

Աւագների Խորհուրդը հրաւիրում է այն անձերին, որոնք կը ցանկանան ամերային սեզոնի համար լարանում [illegible] կազմել Ժողովարանում նուագելու համար, ներկայացնել յայտարարություն Աւագների Խորհրդին մինչև սեպտեմբերի 25 ը։ Յայտարարությունները կընդունվեն Ժողովարանի գրասենեակում ամեն օր՝ երեկ. ժամը 8—11-ը։
առ. (կ.) 627. 3—3

## Թիֆլիսի Ժողովարան

Աւագների Խորհուրդը հրաւիրում է այն անձերին, որոնք կը ցանկանան իրանց վրա վերցնել Ժողովարանի բուֆէտի պահումը, ներկայացնել մինչև սեպտ. 25-ը յայտարարություն Ժողովարանի գրասենեակին, որ բաց է ամեն օր՝ երեկ. ժամը 8—11-ը։
առ. (կ.) 628. 3—3

## ԹԻՖԼԻՍԻ ԱՐՀԵՍՏԱՒՈՐԱՑ ԿԼՈՒԲ

Կիրակի, սեպտ. 20-ին
Թիֆլիսի Արհեստաւորաց Կլուբի Աւագների խորհրդի նախաձեռնությամբ

ԿԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԻ

# ԶԲՕՍԱՆՔ

ՅՕԳՈՒՏ ՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ

Այգում տեղի կունենայ զանազան խաղեր, տեղական պարեր՝ ազգային տարազով, ներկայացումներ, հայերէն և վրացերէն լեզուներով, երգեցողական և ասիական երաժշտությունը, սինէմատոգրաֆ։

Մուտքի վճարն է՝ երեխաների համար 15 կ., չափահասների համար՝ 25 կ.։

Սկիզբը ցեր. ժամը 3-ին։

Թ. Ա. Կ. Աւագների Կլուբ
(շ. կ.) առ. 643. 3—3

## ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆ ԵՒ ԼԱԲՕՐԱՏՕՐԻԱ

## ԿԷՕՆՃԵԱՆ ԱՄՈՒՍԻՆՆԵՐԻ

Պիսմք—սկուց, արծաթից, ֆարֆորից և այլն։ Ատամի հեռացումը առանց ցաւի։ Արհեստական ատամները ոսկուց (առանց քիմքի) և կաուչուկից՝ կատարելագործված մեթոդով։

Ընդուն. 10—2 առաւ, 4—7 երեկ. Լիրմոնտովսկայա փողոց № 1. Մուտքը պէրէուլկից։
(ա. օ.) առ. 515. 100—32

## ՆՈՐ ՈՑԺԵՐ ԵՆ ՀԱՐԿԱՒՈՐ

«Մշակի» երէկվայ համարում տպված մեր առաջնորդողի մէջ արծարծված միտքը աւելի բացայայտելու համար, մի քիչ աւելի երկար կանգ առնենք այն հարցի վրա, որ հրապարակ է հանել «Մշակը» հայ ժողովրդի կրած ահռելի աղէտի պատասխանատուների մասին։

Ամեն մի երկրի, պետության մէջ, երբ գործերի կառավարությունը կամ ղեկավարությունը գտնվում է մի որոշ մարմնի, խմբակցության կամ հոսանքի ձեռքում, երբ որևէ աղէտ է պատահում, երբ կառավարության հետևանքները վնասակար են լինում, անմիջապէս ծագում է պատասխանատուության հարց և ծագում է հարց՝ հեռացնել այդ կառավարությունը ասպարէզից և նրա տեղ կանչել այնպիսի անձանց, որոնք ձեռնհաս և կարող լինէին գործը մանել աղէտը, նոր կուրսով տանել երկիրը, որոնք չընկնէին նոյն սխալների մէջ, որոնց մէջ ընկել են նախկին կառավարողները կամ գործերը վարողները, որոնք վայելէին ժողովրդի լիակատար վստահությունը։

Սխալները կարող են լինել գիտակցական և անգիտակցական. բայց ոչ մի տեղ տեսնված չէ, որ սխալներ գործողների ձեռքով կամենային ուղղել սխալները. ոչ, նրանց հեռացնում են և նոր մարդկանց ձեռքով, այդ սխալներին մասնակից չեղող մարդկանց ձեռքով ուղղում են սխալները, նոր ուղղագիծ (conduite de ligne) են մշակում։

Հէնց այդ հիման վրա ներկայումս ռուսական Պետական Դուման և զանազան հասարակական համագումարները, վերջապէս ռուսական ամբողջ պրոգրեսիվ հասարակական կարծիքը պահանջում է փոխարինել մինիստրությունը կամ կառավարությունը ժողովրդի լիակատար վստահությունը վայելող անձերով։

Նոյնը պէտք է պահանջենք, պահանջում ենք և մենք։

Հայությունը, ի մեծ ամօթ հայ պատմական կեանքի, վերջին տարիները ստեղծեց մի քանի Հերոստրատներ, որոնց անունը տալ հարկ չը կայ, նրանք շատ լաւ յայտնի են։ Այդ Հերոստրատներն իրանց անձնական փառասիրությունից դրդված՝ մեծամեծ յոյսեր ներշնչել տուին հայ ժողովրդին, մինչ այդպիսի յոյսեր տուողներ, մինչդեռ այժմս է պարզվում, չեն եղել։ Եւ առաջ եկաւ մի ընդհանուր ոգևորություն, որը արուեստական կերպով պահպանեց մի որոշ հոսանք, իրան թիկն ունենալով մի հաստատություն, որ իրան համարում էր ազգային։

Սակայն նրա գործունէության հետևանքն այն եղաւ, որ հայ ժողովուրդը Թիւրքիայում ենթարկվեց ոսկալի աղէտների, և այն մարդիկ, որոնք յաւակնություն էին ունեցել գործերի կառավարությունը ստանձնել, փախստականական մեծ գաղթի ժամանակ այնքան ապիկար և անբարեխիղճ հանդիսացան, որ չը կարողացան հարիւր-հազարաւոր փախստականներին ուղեկցել գոնէ մի հարիւր պահակախմբով, ճանապարհին մնդական կայաններ հիմնել և թոյլ չը տալ, որ հարիւր-հազարաւոր ժողովուրդ մրսող 20 օր ճանապարհորդէ անօթի, կերակրվի խոտով և հողով և հանէ Իգդիր ու Էջմիածին արդէն հիւծեալ, նուազեալ և ուժասպառ ու մահացեալ։ Մթթէ իրաւունք չունենք այժմ պահանջել, որ պատասխանատուները երևան գան։ Մթթէ իրաւունք չունենք այսօր պահանջել, որ այդպիսի աղետալի սխալներ գործող մարմինները, անհատները հեռանան անմիջապէս ասպարէզից և գործի գլուխ կանգնեն նոր մարդիկ, ժողովրդի լիակատար վստահությունը վայելող մարդիկ, որոնք, գուցէ, կարողանան, որքան էլ աղէտը սոսկալի է, գէթ դոյզն դարմանել աղէտը, տանել ժողովուրդը նոր ուղիով, նոր կուրսով։ Եւ մթթէ իրանք՝ այդ մարմինները չը պէտք է զգան, որ ժամանակ է արդէն հեռանալ և գնալ ապաշխարելու, զղջալու ու խոկալու գործված անհալի սխալների մասին։

Իսկ թէ մեր ժողովուրդը, արիւնաքամ եղած Թիւրքահայ ժողովուրդը, իբրև կենսունակ տարր, կարող է ոտքի կանգնել, վերակենդանանալ, վերածնվել —դրա մասին մենք տոգորված ենք կենդանի հաւատով, բայց գտնում ենք, որ միակ պայմանն այն է, որ հիները, սխալ գործողները, աղէտի պատճառողները հեռանան ասպարէզից և թողնեն այժմ գործելու նրանց, ովքեր կարող են նոր ոգի, նոր շունչ, նոր եռանդ ներշնչել և աշխատել։

Նորից կրկնում ենք. ժամ է, որ հայկական Հերոստրատները հեռանան ասպարէզից։

Հ. Ա.

## ԿՈՉ

Տաճկահայաստանը արեան ծով դարձաւ, հայ ժողովուրդը ենթարկվեց չը տեսնված տառապանքների... Հայաստանի դաշտերն ու լեռները, կիւղերն ու քաղաքները ողողվեցին հայի արիւնով... կոտրվեցին, բնաջնջվեցան տասնեակ հազարներով, հարիւր հազարներով... կենդանի մնացածները խուժեցին Կովկաս անօթի, ծարաւ, ուժասպառ, հիւծված, ամեն բան կորցրած...

Մեր ազգային վշտի այս ծանր օրերին, ճակատագրի սոսկալի հարուածներից ընկճված, մենք հոգեկան մխիթարություն պէտք է որոնենք մեր պարտականությունների մէջ, մենք պէտք է սփոփենք պէտք է խնամենք Թիւրքահայության այն թշուառ բեկորները, որ ապաստան են գտել մեզ մօտ Կովկասում։ Մեր խնամքին, մեր կարեկցությանն են կարօտ մեր դժբաղդ փախստականները. տանք նրանց ինչ որ հարկաւոր է, պահպանենք նրանց զոյությունը մինչև պատերազմի վերջը, որպէս զի հնարաւոր լինի վերադարձնել նրանց նորից իրանց ամայացած հայրենիքը. դա մեր ահեղ սուրբ պարտականությունն է։

Սեպտեմբերի 25—26 ը Հայկական Կենտրոնական Կոմիտէի նախաձեռնությամբ ժողովարարություն պէտք է լինի տուփերով Թիւրքահայ փախստականների օգտին։

Հայրենակիցներ, կատարեցէք ձեր ազգային պարքը, առատօրէն լցրէք շրջող տիկինների և օրիորդների տուփերը յօգուտ ձեր կարօտ ու տանջված եղբայրների։

առ. 662. 1—1

## ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՕՆ

Հայոց Դրամատիկ Ընկերություն

Երկուշաբթի, սեպտեմբերի 21-ին, 1915 թ.

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—◆ ՍԵԶՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ ◆—

Կը ներկայացնէ

# ԿՈՐՇԱՆՎԱԾԸ

Դրամա 4 արարուածով, ՇԵՐՎԱՆԶԱԴԷԻ։

Մասնակցում են.—տ. տ. Աշխէն, Զաբէլ, Ժամէն, Մանուչարեան, Սեւուէան և Յասմիկ. պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Աւետեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Սօսրաքեան և ուրիշներ։

Սկիզբը երեկ. ճիշդ ժամը 8-ին։ ◆◆ Տեղերի գները սովորական են։
Կասսան բաց է ամենայն օր առաւ. ժամը 10—2 ը և երեկ. ժամը 6—8 ը։
Տոմակները ծախվում են միմիայն թատրոնի կասսայում։

Ռեժիսեօր՝ ՍԵՒՈՒՄԵԱՆ Դերասանական Վարչություն
առ. 656. 2—2

## 6-րդ Հայկական Կամաւորական գնդի Կենտրոնական Կոմիտէն

յայտարարում է ի գիտություն հասարակության, պաշտոնական անձանց և հիմարկությունների, որ կառավարական զինուորական պաշտաց մարմնի կողմից ճանաչված և հաստատված է ՀԱՅԿ ԿԱՆ 6 ՐԴ ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ԳՆԴԻ ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷՏԸ։ Այդ Կոմիտէն է հանդիսանում այսուհետև գնդի անունից խօսող, բանակցող և կարգադրող միակ պաշտոնական և իրաւասու մարմինը, դէպի որը պէտք է ուղղվեն գնդի անունով լինելիք գրագրությունները, նպատները և դիմումները։ Օրինաւոր կը ճանաչվեն միայն այն ձեռնարկները և դիմումները, որոնք թույլատրված և վաւերացված կը լինեն բացառապէս Կոմիտէտս պաշտոնական թղթով և կնիքով։

Հայկական 6-րդ Կամաւորական գնդի Կենտրոնական Կոմիտէի
Նախագահ՝ Սիմ. Հովսեան, քարտուղար՝ Աղ. Տէր-Վարդանեան

Դրամական առաքումները ուղղվելու են Կոմիտէի գանձապահ Յակոբ Ալէքսանեանին։ Կոմիտէի հասցէն. Тифлисъ, Николаевская ул. № 25. кв. 3. Ц. Комитету 6-ой Ар. Доб. Дружины.
առ. (օ.մ.) 647. 3—3

## Թիֆ. Հայկական Կենտրոն. Կոմիտէն եւ Կովկ. Հայոց Բար. Ընկ.

25 և 26 սեպտեմբերի կազմակերպում են յօգուտ գաղթականների տուփերով ժողովարարություն, ուստի խնդրում են այն անձանց, որոնք կը ցանկանան մասնակցել ժողովարարությանը՝ մինչև 23 ամսոյս դիմել հարապատասխան քաղաքամասերի կարգադրիչ տիկիններին։

I Քաղաքամասում.— Մ. Գ. Մինկուիչ—Օլգինսկայա, տուն Ղարդանեանի.
II » Վ. Ի. Անանեան—Գրիբոյեդովսկայա, 15.
III » Ռ. Ս. Շահպարոնեան—Բարշչեվսկայա, 13.
IV » Ե. Պ. Ղարդանեան—Սերգիէվսկայա, 14.
V » Տիկին Բաղդասարեան—Վօրոնցովսկայա, 34.
VI և VII » Հայ Օրիորդների Կոմիտէ—Պուշկինսկայա, 11.
VIII և IX » Ն. Ի. Ալիբէկեան—Բեբուտովսկայա, 54.
X և XI » Կ. Ու. Կազարովա—Բէբուտովսկայա, 27։

Կարգադրիչներ՝ Հ. Սուքասեան, Վ. Անանեան
(կ.) առ. 653. 2—2

Կովկասեան ուսումնարանական շրջանի հոգաբարձուի թույլատրությամբ Թիֆլիսի III գիմնազիայի նկարչության ուսուցչուհի Ե. Պատկանեան ԲԱՑ Է ԱՐԵԼ

## ՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԵՐԵԿՈՅԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Դրվել կարելի է երեկոյեան ժամը 5—7-ը, Բէբուտովսկայա փ. № 2, տ. Քիշմիշեանի։
առ. (հ. հ.) 664. 3—1

## ԶՈՒԲԱԼՕՎԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ

Հայկական Դրամատիկ Խմբակցութ. Վարչությունը

ցանկանալով ուժեղացնել Խմբակցության թատերասէրների կազմը՝ պատիւ ունի յայտնելու, որ Խմբակցության կազմակերպելիք ժողովրդական ներկայացումներին մասնակցել ցանկացող սիրողասիրողուհիները և աշխատակիցները բարեհաճեն դիմել գրաւոր կամ բանաւոր Վարչության անդամներին հետևեալ հասցէով՝

1) ՄԻՔ. ՍՏԱՄԲՈԼՑԵԱՆԻՆ—Խմբակցության գրասենեակ. Сололакская, 20.
2) Ա. ՆԱԶԱՐԼԻԹԵԱՆԻՆ - Թանգոյեան դպրոցը. Михайловскій проспектъ.
3) Ա. ԷԼԻԶԲԱՐԵԱՆԻՆ—Հալաթար. Петро-Павловская, № 1.
4) Խմբակցության ռեժիսսեօր ԱՄՕ-ԽԱՐԱԶԵԱՆԻՆ.— Орбеліановская, № 20.
առ. (կ.) 616. 3—3

## ՀՐԱՒԻՐՎՈՒՄ Է

## ՄԻ ՀԱՅ ԲԺԻՇԿ

շաբաթական երկու անգամ այցելելու համար Նպատամատոյց Ընկերության հիմնած փախստականների օրբանոցը (Վերա, Զիլինգարեանների այգին)։ Ամսական 8 վճարի համար նշանակված է 25 ռուբլի վարձատրություն։ Ընկերությունը յոյս ունի, որ ի նկատի ունենալով հիմնարկության բարի նպատակը՝ չեն պակասի հայ բժիշկների մէջ այս հրաւէրին արձագանք տուողներ։

Ցանկացողներին խնդրվում է դիմել «Մշակի» խմբագրության կից Ընկերության գրասենեակը։
առ. 665. 2—1

## ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Ռտիշչեվսկայա 13, տելէֆոն 4—21.

Ընդունելություն թէ կանացի և թէ մանրէի, նոյնպէս և վիրաբուժության կարիք ունեցող մնայուն (ստացիոնարն) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդություններից) վաղօրօք գրվելու պայմանով։
Ընդունելություն՝ կանացի հիւանդ. ամեն օր՝ ժ. 1—12 առ.։

Հիւանդանոցի բժիշկները

Ա. Ա. Յարութիւնեան
Ն. Ն. Վեսելով զօրով
Վ. Ա. Զակրժեվսկի
Ի. Գ. Կալամկարեան
Ա. Ա. Նովիցկիյ
Գ. Ն. Տէր-Ներսէսեան
Ա. Ր. Փիշէր
Ս. Պ. Շահպարոնեանց
(չ.ու.կ.) առ 970. 100—89

Բերլինի համալսարանի
ԲԺՇԿԱՊԵՏ

## Գ. Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆՑ

ներքին հիւանդությունների ընդունելություն. առանձնապէս կրծքի, թոքերի, ՊՈՒՊՈՏԻ և սրտի. բժշկություն նաև խառն ՏՈՒՐԲՈՒԼԵՆՆԵՐՈՎ, արհեստական ՆԵՊՎՄՈՏՈՐԱԿՈՒՄՈՎ։ Թոքերի և սրտի, նաև ուրիշ օրգանների քննությունը և լուսանկարները լուսաւորված ՊՐՆՏԳԷՆՆԵԱՆ ՀԱՆԹԱՑԻՆ ՃԱՌԱԳԱՅԹՆԵՐՈՎ։ Ամեն օր՝ 9—1 ժամ. ցեր. և 5—7 ժամ. երեկոյեան։ ՀՐԱՒԻՐՆԵՐԻՆ առ. ժ. 9—10 ՀՐ։ Бебутовская, 23. тел. 7-29
առ. (ա. օ.) 504. 100—41

ԲԺԻՇԿ

## Շուշանիկ Նազարեան

(Մանրագէտ կանանց հիւանդությունների եւ մանկաբարձուհեան)

Վերադառնալով հանգստյան ջրերից՝ վերսկսել է հիւանդների ընդունելությունը։
Ընդունում է ամեն օր՝ (առ. ժ. 1—3. (եր. ժ. 4—6.
Հասցէն՝ Սօլոլակ, Ռտիշչեվսկայա փ. № 1. Հեռախօս 10—58.
(հ.հ.կ.) առ. 634. 100—4

## ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

### ՊԱՏԵՐԱԶՄ ԹԻՒՐՔԻԱՅԻ ԴԷՄ

—o—

ՌՈՒՍ-ԹԻՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
19 սեպտեմբերի

ԹԻՖԼԻՍ.—Պաշտօնական։ Կովկասեան զօրաբանակի շտաբի կողմից.

Սեպտեմբերի 16-ին ծովամերձ շրջանում հրացանաձգություն էր։

Օլթիի ուղղությամբ՝ Արդոսից դէպի հիւսիս մեր հետախոյզ զօրախմբերը ոչնչացրին թիւրքական մի ուղեկալ։

Դուտախի ուղղությամբ մեր զօրքերն աջողությամբ ետ են մղում յամառությամբ դիմադրող քիւրդերին Մ՝օլլա Մ՝ուստաֆա և Մ՝եծ-Դուտախ գիւղերի շրջաններում։

Վանի շրջանում մեր զօրքերը ետ են մղում թիւրքերին Ոս-

տանի ուղղութեամբ։

**Մնացած զօրաճակատում փոփոխութիւն չը կայ**

## ԱՆԳԼՕ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ԼՕՆԴՕՆ.—Լրացուցիչ պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, Տիգրիս գետի մօտ գերի ընկածների թիւը հաւասարվում է 1650 Թուրքի։

Թշնամու զօրքերի թիւը մօտ 3000 կանոնաւոր զինուոր է սակաւաթիւ տեղացիների հետ։ Թշնամու ամրութիւններն ընդարձակ են և կառուցված են տեխնիկայի վերջին կանոններով։

Սեպտ. 16-ի առաւօտեան անգլիական աէրոպլանները տեսան, որ թուրքերը փախչում են թէ ցամաքային և թէ ջրային ճանապարհով դէպի Բաղդադ։ Աէրոպլաններից մինը ռումբ նետեց թշնամու մի մեծ շոգենաւի վրա։

Մեր հեծելազօրը մտել է Կուտէշմարուս։ Մեր նաւերը շարունակում են հետապնդել թշնամուն։

## ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԴԱՐԴԱՆԵԼՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ԱԹԷՆՔ.— Դարդանէլի ռմբակոծութիւնը շարունակվում է և արգելք է լինում թուրքերին ամրանալ։

# ՀԱՄԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

—o—

## ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ՌՈՒՍ-ԱՒՍՏՐԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ. — Պաշտօնական։ Գերագոյն Զօրահրամանատարի շտաբի կողմից։

Գերմանացիների յարձակումը Միսհօֆ շրջանում (Միտավայից դէպի արևելք) աջողութիւն չունեցաւ։

Գերմանական աէրոպլանները մի քանի ռումբ նետեցին Ուստ-Դվինսկի, Ռիգայի և Օգէր կայարանի վրա, որոնք սակայն մեր զինուորական շահերին վնաս չը պատճառեցին։

Գրենդէնի շրջանում գերմանացիք կատաղի ռմբակոծութիւնից յետոյ յարձակում գործեցին և ձեռք ձգեցին մեր խրամատներից մի քանիսը։ Կռիւը շարունակվում է։

Գերմանացիների յարձակումները Բէրհօֆի շրջանում և Դրիսվիատա լճի մօտ վանվեցին։ Մենք կուով վերցրինք Դուսիլովիչի գիւղը։ Հակառակորդը վանվեց նաև Աժունի գիւղից և Մէդիօլա կայարանից։ Գուլի գիւղի շրջանում, Նարոչ լճից մի փոքր դէպի արևելք, մեր հեծելազօրը յարձակումով մի տեղում ձեռք ձգեց թշնամու շատ տայլեր և մօտ 70 գերի։ Մի այլ տեղ ձեռք ենք ձգել աւելի քան 100 սայլ, ձիեր, զէնք ու մի քանի տասնեակ գերի։ Շատ գերմանցի սրի քաշվեցին փախչելիս։ Գոտ գիւղի մօտ (Նարոչ լճի մօտ) տաք կռիւ էր գերմանացիների հետ։ Նրանց վաշտերից մինը սրախողխող արվեց, նրա մնացորդները գերի ընկան։

Նովոգրուդկից դէպի արևելք, Ստոբին Սերվէչի մօտ մեր զօրքերը ներս խուժեցին Ժուկի և Կօբէլիցի գիւղերը։ Գերմանացիք փախան դէպի գլխաւոր դիրքերը, ձգելով զէնքերը և ռազմական իրերը և մօտ 100 մարդ, որոնց մենք որի քաշեցինք։ Նովոսէլկա գիւղի մօտ անակնկալ հարուածով գերմանացիք վանվեցին։ Վերցրինք գերիներ ու աւար։

Զարէչի և Դէնիսովցիզի մօտ՝ Բարանովիչից դէպի հարաւ-արևելք հակառակորդը վանվեց Շարա գետի այն կողմը։

Միջին Ստիրի մօտ, Օբօրկի գիւղի շրջանում (Կօլկից դէպի հարաւ-արևելք) գերմանացիք մրրկային կրակից յետոյ յարձակում գործեցին մեր զօրքերի վրա։ Անցնելով 100 քայլից ոչ աւելի և կրելով ահագին կորուստներ, գերմանացիք չը դիմացան և դիմեցին անկարգ փախուստի։

Ցամաք կռիւը զարգանում է Լամանէ շրջանում Օբօրկից դէպի հարաւ։

Ստացված տեղեկութիւնների համաձայն, աւստրիացիք օդային հետախուզումներ կատարելու ժամանակ, մեր ձախ զօրաթևի կրակից խուսափելու համար, թուրչքներ են կատարում բուսմինական հողի վրա։

Ստիրի գետի մօտի կռիւներում գերմանացիք վերջին օրերի կռիւներում գործ են ածում բացառապէս պայթուցիկ գնդակներ։

## ՌՈՒՍԱՑ ՇՏԱԲԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Ներկայումս շտաբը իր ժամանակին է գտնում ազդարարել, որ մի շարք նպատաւոր ռազմական ձեռնարկութիւնների շնորհիւ մեր զօրքերի զօրաճակատի ընդհանուր դրութեան մէջ նկատվում է նոր, մեկ համաբարեկամ ընթացք։ Բազմաթիւ վերջապահ կռիւների մէջ իր մեծութիւն ցոյց տուած մեր զօրքի օգին աւելի բարձրացաւ՝ վերջին օրերում կատաղի ձեռնամարտերի և աջող արշաւանքների մէջ գերմանացիների վրա տարած աջողութիւններից։

Մինչդեռ մեր զօրքերի օգնութեան հետ ընկնում է գերմանացիների օգնութիւնը։ Այդ երևում է ի մէջի այլոց նրանից, որ, յաճախ, գերմանացիք կուի դաշտում ձգում են թեթև վիրաւորվածներին, թողնում են ճանապարհներին սայլեր, ռազմամթերք ու զէնք, կրակում են անկանոն և այլն։

Արևմտեան զօրաճակատում մեր դաշնակիցների համաչափ մտածված յարձակումը վերոյիշեալի հետ միասին նոր ապդակ է ծառայում՝ ամրապնդելու դաշնակիցների հաւատն առ միմեանց այժմ ու ռազմի արժանաւորութիւնները։

## ԳՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԵՒ ԱՆԳԼՈ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.— Պաշտօնական հաղորդագրութիւն.

Արտաւոյում թշնամին եռանդով ռմբակոծեց մեր նոր դիրքերը Սուշէից դէպի արևելք։

Շամպանիում մենք ամրացանք գերմանացիների խրամատների երկրորդ գծի մի քանի կէտում։

Բէլգիայում մեր ծանր թնդանօթներն աջակցեցին բրիտանական նաւատորմին, որ գործում էր ծովափի մարտկոցների դիմաց։

Արտաւոյում թշնամին ակտիվ գործունէութիւն ցոյց տուեց Արմանկուրի մօտ և Ռուայի շրջակայքում. թշնամու ուժեղ հետախոյզ զօրամասը ցիրուցան եղաւ մեր կրակից։ Բուվրէնի առաջ մենք պայթեցրինք մի քանի ական օրոնք և աւերեցին գերմանական խրամատները։

Շամպանիում մենք առաջացանք Մէնիլից դէպի հիւսիս։ Մենք ձեռք ձգեցինք նոր գերիներ։ Այժմ պարզվում է, որ մեր վերցրած դաշտային և ծանր թնդանօթների թիւը, սկսած սեպտ. 12-ից, մինչև Շամպանի օրաճակատի վրա, ներկայումս հաւասար է 121-ի։

Մեր օդաչուները այսօր 72 ռումբ նետեցին Գիսիկուրի կայարանի վրա. ռմբակոծութիւնն, ըստ երևոյթին, շատ աջող էր. օդաչուները վերադարձան անվնաս, չը նայած թշնամու ատաթիկ ռմբակոծութեան։

Էն գետից դէպի հիւսիս թշնամին կատաղի ցոյց արաւ մեր խրամատների հանդէպ, բայց եռանդուն ռմբակոծութիւնը յարձակումներ չը հետևեցին։

Մասաժից դէպի հիւսիս մեր առաջխաղացման ժամանակ մենք երեկ գերեցինք 280 զինուոր, որոնցից 6-ը օֆիցեր են։

ՀԱՒՐ.— Բէլգիական հաղորդագրութիւն. Զօրաճակատի զանազան կէտերում թնդանօթաձգութիւն է ընդմիջումներով։ Բամակապելէն, Ցեսկերկէն և Բէնինգան ռմբակոծվում են։

## ԳՐՈՒԹԻՒՆԸ ԱՐԵՒՄՏԵԱՆ ՃԱԿԱՏԻ ՎՐԱ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՊԱՐԻԶ.—Ռուսաստանի զինուորական ներկայացուցիչներից մինը, հանդիսանալով վկայ Շամպանիում տեղի ունեցած պատերազմական գործողութիւնների, տեղեկութիւններ հաղորդեց Պետ. Հեռ. Գործ. Թղթակցին այն զարմանալի կազմակերպութեան մասին, որին հասել են Ֆրանսիացիք և որը հնարաւորութիւն է տալիս մեծ յաջողութիւն ունենալ, որ դաշնակիցները նոր արշաւանքների են ձեռնարկելու արևմտեան զօրաճակատի վրա։

Պատասխանելիք չէր կարող երկարատև լինել տեխնիկական պայմանների պատճառով. հարկ եղաւ նաև սպասել անգլիական զօրքերի թափ առնելուն։

Միաժամանակ դրա հետ Ֆրանսիացիք հոյակապօրէն կազմակերպեցին զօրաճակատի մի մասը՝ դնելով նրա վրա տարբեր տեսակի բազմաթիւ թնդանօթներ։ Օդաչուները մանրամասնօրէն ուսումնասիրեցին կուի տեղերը, թնդանօթաձգութիւնը զեկավարելու համար։ Թնդանօթային պատրաստութիւնը տեւեց 3 օր։ Այդ ռմբակոծութեան հետեւանքը սոսկալի եղաւ։

Գերմանացիների կորուստները 80,000-ից պակաս չեն, մինչդեռ Ֆրանսիացիների կորուստները համեմատաբար խոշոր չեն։ Զօրքի տրամադրութիւնը շատ լաւ է։

Երկու կարգ զօրագիծները գրաւելուց յետոյ, Ֆրանսիացիք սարսված են լինելու կուսակցութեան մէջ, այլ բաց դաշտում։

## ԱՒՍՏՐՕ-ՍԵՐԲԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՆԻՇ.— Թշնամու 7 աէրոպլան ցեր. ժամը 4—6 երեացին Պօժարէվացի վրա և նետեցին քաղաքի ու շրջակայքի վրա մօտ 60 ռումբ, որոնցից սպանվեց 1 և վիրաւորվեցին 5 մարդ։ Պօժարէվացը զինուորական քաղաք չէ։

Թշնամու 5 կամ 6 աէրոպլան սեպտ. 17-ին երեացին Կրագուէվացի վրա և նետեցին մօտ 30 ռումբ։ Աէրոպլաններից մինը մեր կրակից այրվեց և ընկաւ քաղաքի կենտրոնում։

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԶԻՆԻՈՐԱԿ. ՄԻՍՍԻԱՆ ԱՐՔԱՅԱԿԱՆ ԿԱՅԱՆՈՒՄ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ԳԵՐԱԳՈՅՆ ԶՕՐԱՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ԿԱՑԱՆ.— Երէկ, սեպտ. 17-ին, Աղքայական կայանն եկաւ Ֆրանսիայից յատուկ զինուորական միսսիա զինուորական գերագոյն խորհրդի անդամ գեներալ դ'Ամադի գլխաւորութեամբ, բաղկացած նրա շտաբի պետ մայոր դը Բանտից, աւագ օֆիցէր՝ 1-ին կիրասիրական գնդի կապիտան դէ-Սէլվից, մի պրապօրշչիկից և 3 զինուորից։

Միևնոյն օրը երեկ. ժամը 7-ին գեներալ դ'Ամադը և 2 օֆիցէրները պատիւ ունեցան ընդունվել Թագաւոր Կայսրից և յետոյ հրաւիրվեցին Բարձրագոյն ճաշի։

## ԲՈԼԳԱՐԻԱՆ, ՅՈՒՆԱՍՏԱՆԸ ԵՒ ՐՈՒՄԻՆԻԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ

(Պետ. Հեռ. Գործ.)
18 սեպտեմբերի

ՍՕՖԻԱ.—Զօրահանութիւնը համարեա աւարտված է։ Զօրքերը սկսել են շարժվել դէպի սերբական սահմանը։ Երէկ մեկնելու էր հեծելազօրը դէպի Տօրն, իսկ գիշերը դէպի Ցարեբրօդ էր մեկնելու առաջին հետիոտն դիվիզիան։

ԱԹԷՆՔ.— Զօրահանութիւնն ընթանում է վերին ստորճանի նպատաւոր պայմաններում։

ՊԱՐԻԶ.— Արտաքին գործերի մասնաժողովների մէջ Դելկասէն յայտնեց, որ դաշնակիցները աջակցութիւն ցոյց կը տան Սերբիային, եթէ Բոլգարիան ապրեսիվ գործողութիւնների դիմէ։

ԱԹԷՆՔ.—«Էստիա» լրագիրը ստոյգ աղբիւրից յայտնում է, որ Սև ծովի Վարնա նաւահանգիստում գտնվում են գերմանական 4 սուզանաւ։ Բոլգարական նաւահանգիստները պաշտպանելու համար, եթէ ռուս զօրքը ափ իջնէ և ռուսաց նաւատորմը յարձակում գործէ այդ նաւահանգիստների վրա։

ԲՈՒԽԱՐԷՍՏ.— Մինիստր-նախագահ Բրատիանոն յայտնեց պարլամենտական պատգամաւորութեան, որ միջնորդում էր ընդհանուր զօրահանութիւն յայտարարելու մասին, թէ Բուսմինիայի զօրահանութեան բոլոր կառավարութեան կարծիքով չէ հասել և ներկայումս անհարիր է բացայայտել զօրահանութեան մերժման շարժառիթները, և խնդրեց պարլամենտի վստահութիւնը։

ԱԹԷՆՔ.— Զինուորական մինիստրը պատգամաւորների պալատին օրինագիծ ներկայացրեց յատկացնելու 150 միլիոն՝ պատերազմական պէտքերի համար։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Վիէննայից հաղորդում են, որ, «Նէյէ-Վիներ-Ժուրնալ» տեղեկութիւնների համաձայն, բոլգարական պրեմիէր Բաղդասարովը մօտիկ ապագայում մեկնելու է Բերլին։

ԱԹԷՆՔ.—Տեղեկ քաղաքական շրջանակներում համոզված են, որ Բոլգարիան բռնել է երկդիմի դրութիւն Գերմանիայի և Թուրքիայի համաձայնութեամբ, մի կողմից իր զօրահանութիւնը ուշացնելու նպատակով, միւս կողմից՝ որպէսզի հնարաւորութիւն տայ Գերմանիային կենտրոնացնել իր զօրքերը սերբական սահմանագլխի վրա։ Միևնոյն շրջանների տեղեկութիւնների համաձայն, բոլգար մինիստրների հրաժարականը և իրան աջակցութիւն ապահովելու կառավարութեան ակնյայտ տենդէնցը հետամուտ են պահպանել 15—20 օր շարունակ Բոլգարիայի ներկայ քաղաքական դրութիւնը և միևնոյն ժամանակ այդ քօղարկված քայլով նուազեցնել համաձայնութեան մեծ պետութիւնների կասկածը՝ բոլգարական զօրահանութեան նպատակի վերաբերմամբ՝ մինչև այն բոպէն, երբ Բոլգարիան կարող կը լինի իր իսկական քաղաքականութիւնը երևան հանել։

Ողջունելով բուռն ծափահարութեամբ, Վենիզէլօսը ճառ արտասանեց պատգամաւորների պալատում, որի մէջ ասաց, թէ Յունաստանը Բոլգարիայի զօրահանութեանը չէր կարող նոյնպէս զօրահանութեամբ չը պատասխանել։ Չը նայած երկուստեք արած յայտարարութեան, թէ զօրահանութիւնները կատարվել են զինված չեզոքութիւն պահելու նպատակով, սակայն դրութիւնը, Վենիզէլօսի ասելով, պէտք է լուրջ ընդունել։

Սպպօվիցիայի պարագլուխ Գունարիսը, որ հանդէս եկաւ Վենիզէլօսից յետոյ, հաւանութիւն տուեց պրեմիէրի յայտարարութեանը պալատի ընդհանուր ծափահարութեան տակ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Երբ զէնքի կանչված բոլոր ուսանողները մեկնում էին Բերլինից, բոլգարական միսսիայի խորհրդատու Նիկիֆորովը կայարանում ճառ արտասանեց, յորդորելով ուսանողներին պատմել Բոլգարիային, թէ Գերմանիան ընդունակ է քաղաքական ու զինուորական ինքնազոհութեան։ «Բերլ. Տագ.»-ի ասելով, այդ ճառին պատասխանեց գերմաններին բոլգար-ուսանողներից մինը, որ յայտնեց, թէ Բոլգարիան պատերազմի է ելնում իր թշնամի Անգլիայի դէմ, որ պաշտպան է կանգնած Սերբիային Ուստ և ոչ Սերբիան, այլ Անգլիան է, որ հանդիսանում է համաշխարհային պատերազմի յանցաւոր։ Գերմանիան Եգիպտոս կերթայ ուղղակի Բոլգարիայի վրայով։ Բոլգար ժողովուրդը խաղաղ թիւ չէ կազմում, բայց Բոլգարիայի եաեւում կանգնած է Գերմանիան։ Վերջում ուսանողը ուռա բացագանչեց ի պատիւ Գերմանիայի, Բոլգարիայի, գերմանական կայսրի և բոլգարական արքայի։

—

(Լրագիրներից)

◆ «P. B.»-ին հեռագրում են Կոպենհագէնից, որ երկաթուղային հաղորդակցութիւնը Սերբիայի և Բոլգարիայի միջև ընդհատված է։ Տրամադրութիւնը երկրում լուրջ է։ Ցոյցեր չը կան։ Սոֆիայում յայտնի տածում. թէ Սերբիան կը դիմէ և գործը խաղաղ կը վերջանայ։

◆ Բոլգարիայի բանակցութիւնները քառակողմ համաձայնութեան հետ դեռ շարունակվում են։ Բանակցութիւնները վարում է

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅՐ

Եաման մեր օրեր, եաման մեր վաթան,
Դիպ բարբադ էլաւ, կրսվաւ Հայաստան.
Զը մնացած երկրում մի ջահիլ տղայ,
Մի ջահիլ աղջիկ Աստուած, քեզ մեղայ։

Թալան, ջարդեցին, էրան, խորվեցին,
Զըմեն մեր լաճեր Թրի անցուցին.
Հարս-աղջիկներաց աբուռ վերցուցին,
Հարիւր-հազարով հարեմ փախցուցին։

Էլ չը մնաց ժամ, վանք եա ժամատուն,
Քանդեցին, զողցան, ոչնչեցին բիթուն,
Խաչ, խաչվառ, Ս. Գիրք, ս. Աւետարան
Զըմեն այրեցին, դիպ արին վէրան։

Էլ չը մնաց տուն՝ արուն չը լացէ,
Սուգ, շիւան, լաց, կոծ մեզի է մնացէ.
Զը կան մեր լաճեր, մեր մանչ զաւակներ,
Բիթուն ջարդեցին անզութ դուշմաններ։

Շէն տուներ չը կան, օջախներ քանդվան,
Արտեր չորացան, կալեր էրվեցան.
Փշուր մ'հաց չունինք, քաղցած կը ոռնանք,
Ցամաք ապրելէն մաշվանք, թառամանք։

Էլ մեր զաւակներ մեր միտ չեն ի գար,
Էլ մեր աչք ինոնց քամակէն չի լար.
Ինոնք արդար ին, էս օր չը տեսան.
Ինոնց տեղ լաւ է, մեր տեղը եաման։

Աման ախբերներ, ձեր տին դուրբան,
Խրդճացեք մեզի տըւէք մէկ-մէկ բան.
Տըկլոր ման գալէն աբուռներս գընաց,
Պէօրեկ ոռներուս էլ միս չը մնաց։

Մենք էլ կամենանք, ձեզի բեռ էլանք.
Ձեր ցաւ շատցուցինք, փարէք պրծուցինք։

Ի՞նչ անենք, որտեղ մեր ձեռքեր բանանք,
Մեր նեղ օր, տանջանք դուք լաւ կիմանաք։

Մեր Աստուած մեզի թամամ մոռցեր է,
Ականջներ, աչքեր մեզի գոցեր է.
Բարի դուք էլէք մեզի տիրական՝
Էս զուլում օրին դիպ կըլինք վէրան։

Մ. Շահբազեան

## ԱՂԷՏԻ ԵՒ ՏԱՌԱՊԱՆԵՐԻ ԱՇԽԱՐՀԻՑ

(Այց թուրքահայ փախստականներին)

VI

Քննադատել մի հասատութեան կամ կազմակերպութեան գործունէութիւնը՝ չի նշանակում ուրանալ նրանց մատուցած ծառայութիւնը կամ ժխտել նրանց գոյութեան հասարակական արժէքը։ Դրական քննադատութիւնը, ընդհակառակը, ցոյց տալով եղած գործունէութեան պակասները ու սխալները, նոր ուղիներ ու էջեր է բաց անում յետագայ աւելի լրիւ ու խելացի, նըպատակայարմար ու բեղմնաւոր գործունէութեան համար։

Ո՞վ կարող է, օրինակ, համարձակվել բացարձակ արհամարհանքի կամ բացասման խօսքն արտասանել այն բոլորի հանդէպ, ինչ կատարվել և կատարվում են Էջմիածնում խմբված փախստականների համար։ Որոշ խմբերի և անհատների անձնուէր գործունէութիւնն արժանի է, նոյնիսկ, բոլոր յարգանքների։

Սակայն մեր քննական դիտողութիւնները նպատակ չունեն ամենևին՝ մէկի գովքը վերյիշելու, միւսին բարոյական խրատներ կարդալու։ Մենք վերցնում ենք ամբողջ երևոյթը, որպէս այդպիսին, և պիտի մատնանշենք գործի կազմակերպութեան հիմքում եղած այն սկզբնական խոշոր սխալների վրա, որոնք հետզհետէ ճակատագրական նշանակութիւն ունեցան փախստականների կեանքի համար։

Թուրքահայ փախստականների հոգատարութեան գործով զբաղվող ընկերութիւնների և սրանց կեանքի կոչած յատուկ մարմինների գործունէութեան գերագոյն նպատակը պիտի կայանար մի բանում. ստեղծել ֆիզիքական գոյութեան և ապրուստի նամար նորմալ պայմաններ զէթ նուազագոյն չափերով՝ փախստականների կեանքը փրկելու, նրանց ապրեցնել կարողանալու համար։

Այդ նպատակին հասնելու համար չեն կարող գլխաւոր և արմատական միջոցներ համարվել ոչ դրամ ժողովելը, ոչ սնունդ մատակարարելը եւ ոչ բժշկական օգնութիւն հասցնելը. միջոցներ, որոնց վրա ըսպասվում էր ընկերութիւնների և մարմինների ողջ էներգիան, բայց միևնոյն ժամանակ նոյն իսկ այդ միջոցները, յատկապէս վերջին երկուսը, շատ թերի, պակասաւոր ու անկազմակերպ են։ Ի՞նչ նշանակութիւն ունի սնունդը—օրվայ այդ չոր պարէնը—փախստականի համար, երբ նրա մարդկային-ֆիզիքական գոյութեան պայմանները աննորմալ են։ Եւ ինչ արժէք ունի հիւանդացող փախստականի համար բժշկական օգնութիւնը այդ աննորմալ պայմանների ծոցում, երբ նրա համար, միևնոյն է, վերջկութիւն չը կայ՝ նոյնիսկ արտաքսանօրէն կաղդուրվելուց յետոյ։

Ճիշդ այնպէս, ինչպէս արբեցողութեան դէմ կռուելով չի վերանում ալկոհոլի տարածումը, այնպէս էլ հիւանդների բուժումը դեռ չի նշանակում մահառիթ հիւանդութեան վերացում։

Էջմիածնում մտածել են միայն հիւանդներին բժշկական օգնութիւն հասցնելու մասին, այլ ոչ թէ հիւանդութիւն ստեղծող պայմանների վերացման մասին։

Ո՞րն է հանրական չարիքի այդ նախապայմանը։

Փախստականների գիշեր-ցերեկ բացօդեայ կենցաղը։

Հասկանում էք այդ կենցաղակերպի ամբողջ ծանրութիւնը։

Փորձեցէք կովկասեան առողջ ժողովուրդներից օրևէ մէկին ապրեցնել ամառվայ սոսկալի ասթերին, շուաքից ու հովանոցից զուրկ, տաքացած մերկ սալքարերի կամ չոր հողի վրա. ուտեն և խմեն, նստեն ու պառկեն միևնոյն կէտերում մեխված. ցերեկը խաշվեն, շշմեն ու նուաղեն արեգակի այրող ճառագայթների տակ, գիշերը խիզ նրանց կիսամերկ մարմիններին զով, ցրտախառն քամին, իսկ մի քանի քայլ հեռաւորութեան վրա, շատ յաճախ հինգ իրանց կողքին, նոյն բաց օդում, կեղտոտեն նրանք իրանց արտաթորութիւններով և ապականեն ամբողջ մթնոլորտը։ Ինքներդ դատեցէք, թէ ինչ հետևանքներ կը սպասէք շաբաթների և ամիսների այդօրինակ կենցաղակերպից, թէկուզ այդ փորձութեան ենթական երկաթէ առողջութիւն ունեցող մի ժողովուրդ լինի։

Բայց ի՞նչ կարող էք ասել թուրքահայ փախստականների համար. այդ՝ մահվան վտանգից խուսափած, անարեկված ու յուսահատ, բոլոր ունեցածից զրկված, մի շարք հարազատներ սրի զոհ տուած կամ ճանապարհին կորցրած, օրերով ոտով, շաբաթը տասբօթիկ, յոգնած, քաղցած ու կիսամերկ ճանապարհ կտրած, մասամբ հիւանդ (դիզենտերիայից), մեր կլիմայական պայմաններին անծանօթ ժողովրդին։ Ի՞նչ կասէք, կրկնում ենք, երբ ֆիզիքապէս և հոգեպէս զարհուրելի դառնութիւնների բովից անցած, հետևապէս անառողջ վիճակ ունեցող փախստականներին «հիւրընկալում» և պահպանում են այնպիսի անհարմար պայմանների մէջ, ինչ նկարագրեցինք մենք վերև։

Էջմիածնում գործող մարմինների աննկուն անփութութիւնը—թող թոյլ տրվի մեզ ասել՝ անգիտակցական յանցանքը—կայանում է նրանում, որ նրանք հէնց սկզբից չեն կառուցել վրաններ Վաղարշապատի շրջակայքում, աւելի բաց տարածութեան վրա՝ փախստականներին բացօդեայ կենցաղից ազատելու համար։ Ի՞նչն էր պակասում—դրա՞մը թէ նիւթը—կառուցանելու համար զէթ այնպիսի պրիմիտիւ վրաններ, ինչպէս թափառական ցեղերի մէջ սովորական է՝ տարերի վրա և հայ գիւղերի դաշտերում։ Ոչ, եղել է և կայ դրամ. իսկ նիւթը հեշտ է գտնել, երբ կայ փող*). պակասել են միայն ծնունդ մարդիկ, չեն եղել շրջմայեաց, եռանդուն, բանիմաց կազմակերպիչներ։

Բայց մենք չը վերջացրինք դեռ մեր խօսքը։

Բ. Իշխանեան

*) Էջմիածնում ոչ մէկից չեմ լսել սրէջ գանգատ նիւթական միջոցների պակասութեան մասին։ Ընդհակառակը իմ ուղղակի հարցերին սատանում էի միշտ այն պատասխանը, որ փախստականների համար ժողովված դրամը առատ է։ Նշանակում է՝ նիւթականի արգելք չը կար՝ վրաններ կառուցանելու համար։ Ինչ վերաբերում է կտաւ ձեռք բերելու դժուարութիւններին, դա, յամենայն դէպս, չի կարող արդարացուցիչ պատճառ համարվել. նախ այդ ուղղութեամբ եռանդուն աշխատանք չի գործադրվել և ոչ էլ յատուկ փորձեր ու դիմումներ են արվել, ուր հարկն է. երկրորդ՝ եթէ հարկաւոր չափերով չը մարդին կտաւ դնեն, կարելի էր պակասը լրացնել տախտակներով՝ չնայելով երկար վրանաձև կառուցուածքը տախտակներից կամ գուցէ և թիթեղներից։ Յամենայն դէպս այդ անփութութեան հանդէպ չի կարող սրէջ արդարացուցիչ առարկութիւն լինել։

Անգլիան իբրև քառակ համաձայնութեան հաւատարմատար։

✦ Բոլոր նշաններից երևում է, որ բոլգարական կառավարութիւնը դիտակցում է իր վերին աստիճանի լուրջ կացութիւնը։ Նա անկարողանում է միանգամից վճռել Գերմանիայի գիրկն ընկնելու և քառակ համաձայնութեան դէմ գնալու հարցը։ Եւ հրաշք չի լինի, եթէ Բոլգարիան իր զօրահանութիւնը աւարտելով միանայ աւելի ուժեղ կողմին։

## ՀԱՄԱԵՒՐՕՊԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԻՐՋԸ

(Պետ. Հեռ. Գործ.)

18 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.—Փախստականների հարցով զբաղող մասնաժողովի մէջ մեծամասնութիւնը այն կարծիքը յայտնեց, թէ պէտք է դրական վարձատրութիւն տալ փախստականներին արդարութեան հիման վրա՝ պատերազմի ժամանակ կրած վնասների համար։

Բարձրագոյնս հրամայվեց դադարեցնել մինչև սեպտ. 16-ը ծագած այն գործերը, որոնք վերաբերում են բնակավայրի շրջանից դուրս ապօրինի առևտուր կատարած հրէաներին։

Գեներալ Կուրոպատկինը նշանակվում է գրենադէրեան զօրաբանակի հրամանատար։

Մինիստրների խորհուրդը մանր հնչիւն դրամների պակասը լրացնելու համար որոշեց անմիջապէս, սովորական քանակութիւնից անկախ, պատրաստել տալ 11.350.000 ռուբլու մանր արծաթէ դրամներ։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Բուդապեշտից պաշտօնապէս հաղորդում են, որ վճռված է հոկտեմբերի կէսերին բաց թողնել 6%-ային երրորդ զինուորական փոխառութիւն։

ՊԱՐԻԶ.—Ֆինանսների մինիստր Ռիբոն օրինագիծ ներկայացրեց յատկացնելու նորից 27 միլիոն ֆրանկ՝ զինուորների ռոճիկները 20 սանտիմով աւելացնելու համար։ Օրինագիծն ընդունվեց առանց վիճաբանութիւնների։

ՍՏՕԿՀՕԼՄ.—Պաշտօնապէս հաղորդվում է, որ գերմանական կառավարութիւնը ցաւակցութիւն յայտնեց շվեդական կառավարութեանը «Մարլանդ» շոգենաւը ջրասուզելու ատիթով և պատրաստակամութիւն արտայայտեց հատուցանել վնասները։

## ԱՏԼ ԵՒ ԱՏԼ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետ. Հեռ. Գործ.)

18 սեպտեմբերի

ՊԵՏՐՕԳՐԱԴ.— Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնն աւարտել է ընդհանուր ուսում մացնելու հարցի նիւթեր ժողովելը, որոնք յանձնված են տարրին և միջին կրթութեան հարցերով զբաղվող ուսուցչական բիւրոյի եղրակացութեան։

Վախճանվեց պրոֆէսոր Մակովկին։

ՊԱՐԻԶ.— Դադարեց «Գազետ-դը-Ֆրանս» լրագիրը, որ հրատարակվում էր 1631 թուից։

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԻՐՋԸ

✦ «B. B.»-ին հեռագրում են, «Yossische Zeitung»-ը հաղորդում է, որ երբ Սարատովի համալսարանում դասախօսելիս պրոֆ. Կրամերը սկսեց պարզել բարքերի անկման պատմութիւնը Ֆրանսիայում և Անգլիայում, լսվեցին ձայներ. «Ապա Բէլգիայի չէզոքութեան խախտումը, կանանց և երեխաներին սպանելը, իսկ «Լուսիտանիան» ջրասուզե՞լը»։ Սկսվեց իրարանցում, որի ժամանակ զօրձի հանվեցին դռները։ Սպանվեցին 3 հոգի, մի քանի հոգի վիրաւորվեցին։ Իրարանցման մէջ ուժեց պրոֆէսորը, որ երկու ապտակ տուաց Լէլոսցի ուսանողից։ Այդ ուսանողը յանձնվեց զինուորական դատարանին, որ դատապարտեց նրան մահվան պատժի, բայց Վիլհէլմը մահապատիժը փոխեց հինգ տարվայ բանտի։

✦ Բուխարէստից հաղորդում են, որ զեներալ դ'Ամադը արքայական կայանը այցելեց շատ կարևոր քաղաքական միսսիայով, որի մասին նա խօսափեց որևէ տեղեկութիւն տալ ժուրնալիստներին։

✦ Հեղինակաւոր աղբիւրից հաղորդում են, որ ամենայն հաւանականութեամբ սեպտ. 19-ին դաշնակիցները Բոլգարիային կը յանձնեն վերջնագիրը։ Բոլգարիային պէտք է առաջարկվի որոշակի կերպով արտայայտվել պետութիւնների այս կամ այն խմբակցութիւններից օրին ընտրելու մասին։

✦ «Բ. Ս.»-ին գրում են, որ Շլօկի մօտ շրջված են թշնամու երկու աէրոպլան։

✦ Ցունաստանը համաձայնվել է իր նահանգապետներում դաշնակիցների զօրքը տեղաւորելուն, եթէ Բոլգարիան յարձակվի Սերբիայի վրա։

✦ Դիւանագէտները հաւատացած են, որ Բոլգարիան վերջացնելով զօրաժողովը՝ կը դարձակվի Սերբիայի վրա։

✦ Սերբիան սահմանում կենտրոնացած է 100,000 բոլգար։

✦ Աթէնքից հաղորդում են, որ Սօֆիայում տեղի է ունենում բոլգարական, գերմանական և գերմանական շառաւիղների ներայացուցիչների խորհրդակցութիւնը, որի պատճառն է՝ միալար ծրագրի մշակումը։

## ԼՈՒՑՑԱՏԻ ՃԱՌԸ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎԻ ՄԱՍԻՆ

Ֆրանս-իտալական կոնդրէսի հրաժեշտի ճաշկերոյթին նախկին պրէմիէր-մինիստր Լուցցատի արտասանեց մի կրկատ ճառ, որի մէջ քառակ համաձայնութեան կռիւը ընդդէմ Գերմանիայի նա համեմատեց Էլլադայի պարսկական տիրապետութեան դէմ ունեցած կռուի հետ։

«Այժմ էլ,—բացագանչեց Լուցցատի,—գործը վերաբերում է Եւրոպայի քաղաքակրթութիւնը փրկելուն»։

Լուցցատի մասնաւորապէս բողոքեց գերմանական մամուլի այն փոքրերի դէմ, որ կամենում են վէճ առաջացնել Իտալիայի և Ֆրանսիայի միջև Միջերկրական ծովի պատճառով։ Իտալացիները և ֆրանսիացիները պէտք է հանդիսաւոր խոստում տան իրար յանուն քաղաքակրթութեան՝ միշտ միութիւն պահպանել Միջերկրական ծովում, որը հաւասարապէս պատկանում է Ֆրանսիային, Իտալիային և Անգլիային։ Վերջապէս Լուցցատին հաղորդեց Ֆրանս-իտալական կոմիտէի հիմնադրութեան մասին և, հրաժեշտի աղջնով դիմելով կոնդրեսին, բացագանչեց. «Ծառաութիւն ազատված Բրիւսելում»։

## «ՊԵՏՐՕԳՐԱԴ-ԲԵՏՐՕԳՐԱԴ»

Գուստաւ-Էրվէն իր «Guere Sociale» թերթում մի ջերմ յօդուած է նուիրել Մոսկվայի համագումարներին և սրանց ընդունած բանաձևերին։ Էրվէն իր յօդուածում ասում է, որ բոլոր դաշնակից երկրների հասարակական կարծիքը Մոսկվայի կողմն է և ցաւ է յայտնում, որ «Պետրոգրադը բնաջրդ էր։ «Դաշնակից ժողովուրդները,—ասում է Էրվէն—շահագրգռված են ռուս հասարակութեան յաղթանակով, որ պիսի հասարակութիւնը յաղթանակ է պատրաստում գերմանացիների վերաբերմամբ»։

## ԱՐՆԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Բրեսա, 12 օգոստոսի

Այն ժամանակ, երբ լուսաւորութիւնը, քաղաքակրթութիւնը, գիտութիւնը իր գագաթնակէտն հասած, երբ համայն Եւրոպան մարդասիրութեան մեծ զաղափարով ընկված՝ կռւում է սպանութեան, ճնշման, գողութեան և աւազակութեան դէմ, այդ նոյն Եւրոպան Գերմանիայի—գիտութեան այդ կաճառի—շնորհիւ, մոռացել է մեծ զաղափարները և դարձել է արեան ծով, անվերջ տանջանքների անծայր դաշտ։ Թշնդանօթների անվերջ դղրդիւնը, սրերի շառաչիւնը, գնդակաբերների դէս ու դէն թռչող բազմաթիւ գնդակները դալիս-տանում են յաւիտենականութեան ծոցը երկվայ հերոսին։ Չը կան այլ ևս դաշտերը զարդարող կանաչ բոյսերը, չը կան այլ ևս աչքեր շլացնող խայտաբղէտ ծաղիկները. մարդկային արիւնն է, որ հոսում է այդ դաշտերում և մարդկային դիակներն են, որ այս ու այն կողմն առատութեամբ ցրված՝ ամայութեան տեսարանը լրացնում են։

Գերմանական զօրքն իր իսկ գերմանական դիակոյտերի վրայով առ այժմ բաւական աջողութիւններ է ունեցել, գրաւելով Ռուսական Լեհաստանը։

Ըստ հեղինակաւոր զինուորականների կարծիքի՝ գերմանական առաջխաղացութիւնը մօտ ապագայում պէտք է որ կանգ առնէ, որովհետև աւելի առաջ գնալը նրա համար բաւական վտանգաւոր աւանտիւրա կը լինի։ Կարելի է պարզօրէն ասել, որ գերմանացիները օրօնում են մի այնպիսի սահմանագիծ, որը հեշտութեամբ կարելի լինէր ամրացնել (ինչպէս այդ արել են ֆրանսիական սահմանում), օրպէսզի կարելի լինէր պահպանել փոքր քանակութեամբ զօրքով։ Այդ հանգամանքը նրանց հնարաւորութիւն կը տար իրանց զօրքի մեծ մասը տեղափոխել կրկին արևմտեան ռազմաբեմը։

Գերմանացիները ներկայումս ճգնում են իրանց աջ ու ձախ թևերով օղակ կազմել, որի համար անշուշտ մեծ օյժ է հարկաւոր և հսկայական զոհեր, որպէսզի կարելի լինի կարել երկաթուղային գծերը և գժուարացնել ռուսական զօրքերի շարժումը։ Ռուսական զօրքերը նոյնպէս նոյն մեթոդով ցանկանում են բռնել գերմանական զօրագնդերին, և ամենայն հաւանականութեամբ մօտ ապագայում պէտք է մեծ ճակատամարտեր տեղի ունենան։

Գերմանացիների աջողութիւնը ամբողջապէս պէտք է վերագրել՝ նախ իրանց երկրորդ, որ գլխաւորն է, կատարելագործված տեխնիկային։ Կրելպի հսկայական գործարանները, որոնք երբեմն համայն աշխարհի համար են գործելիս եղել, այսօր իրանց արդիւնքը միայն գերմանացիներին են մատակարարում, դեռ ևս բաց անելով բաժանմունք Կ. Պոլսում։ Այդ ֆիրմայի Կ. Պոլսի բաժանմունքը օրական մի քանի հազար ռումբ է պատրաստում առանձնապէս Թիւրքիայի համար։

Ռուսական զինուորները շատ աւելի դիմացկուն են և ամեն տեսակ նեղութիւններ կրող, քան գերմանականը և աւստրիականը. նոյնպէս ռուս օֆիցէրները մեծ սիրով գալիս են գալիս պատերազմի դաշտը, և եթէ սրա հետ միասին Ռուսաստանը պատերազմի սկզբից ունենար բաւականաչափ ռազմամթերք, այն ժամանակ հազիւ թէ Գերմանիան կարողանար կռւել ռուսական հողի վրա։

Պատերազմի դաշտ հետևանքներից մէկն էլ փախստականներն են։

Եթէ պատերազմի դաշտը զարհուրանք է առաջ բերում իր արիւնալից վայրերով, որ պակաս տպաւորութիւն է թողնում և պատերազմից այս կողմն, ուր լսելի չէ թնդանօթների ձայնը։

Երկաթուղիների գծի և խճուղիների ամբողջ երկարութեամբ տարածված են խեղճ ու կրակ փախստականները, զրկված իրանց ունեցածից, յաճախ նոյն իսկ ընտանիքի անդամներից, թափթփված այս ու այն կողմը, գերմանացիներից փախչելով, արևի ու անձրևի տակ, փոշու և ցեխի մէջ, քաղցած, հիւանդ, անօթի, գլուխները կորցրած, չը գիտեն թէ որտեղ և ուր են գտնվում։

Ամենամեծ կայարաններից սկսած մինչև ամենափոքրերը լցված են նոյն այդ կիսամերկ փախստականներով. փոքրիկ երեխաների լաց ու կոծը, մայրերի արցունքահեղ, տանջանքակիր դէմքերը սովորական երևոյթ են, այնքան սովորական, որ կարծես թէ աշխարհի սկզբից այդպէս է եղել և այդպէս էլ պէտք է մնայ։

Այն օգնութիւնը, որ ցոյց են տալիս զանազան կազմակերպութիւնները և կառավարութիւնը, չէ լրացնում հսկայական պահանջները։

Աւելի արմատական օգնութիւն կը լինի թողնել ընակիչներին իրանց վայրերում, որտեղ անշուշտ նրանց համար դժուարութիւններ կը լինէին, բայց գոնէ այդպիսով կը պակասեցվեն նախ այն անծայր նեղութիւններն ու հիւանդութիւնները, որոնց մատնվում են, և վերջապէս պատճառ չեն լինի զանազան տարափոխիկ հիւանդութիւնների տարածման և համաճարակների հանդէս գալուն։ Բժ. Վ. Խաչատրեան

# ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՑՈՒՑԱԿ

I

**Թիֆլիսի Նուիրատուների**

(Ցուցակ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 188)

Գ. Մկրտումեան 10 ր., Մ. Ղալթաղեան, Ս. Բէրիէեվ, Պ. Ցակոբեան, Ա. Հայրապետ, Մ. Մելիքեան, Գ. Սագանէլեան, Վ. Սաֆարեան, Ց. Աւետիսեան 5-ական ր., Ա. Ումիտով, Վ. Մուրադեան, Մ. Անանեան, Ա. Դաւթեան, Ա. Մալեան, Ա. Ցակոբեան 3-ական ր., Ս. Բաբերդեան 2 ր., Ա. Դեմիրխանեան, Ե. Սապաւելով, Գ. Ցարութիւնեան, Ա. Նահապետեան 1-ական ր., մի ումն 50 կ։ Ընդամենը 74 ր. 50 կ։

II

**Զարջուի Նուիրատուների**

(Ցուցակ հայ փախստականների)

(Տես «Մշակ» № 190)

Տ. Մ. Բաբայեան, Ց. Խաչատրեան 3-ական ր., Գ. Ք. Տէր-Գրիգորեան, Բ. Գարդիեան, Ս. Գրիգորեան 2-ական ր., Հ. Ցովհաննիսեան, Ա. Դաւուտեան, Ս. Դաւուտեան, Ա. Գասպարեան, Ն. Գասպարեան, Ն. Բաբայեան, Ի. Աւագեան, Մ. Աւագեան, Գ. Աւագեան, Պ. Մնացականեան, Հ. Մնաբլում-օղլի, Ս. Ցարութիւնեան, Մ. Սաղեան, Բ. Բաբայեան, Ա. Գասպարեան, Ա. Եզեկիէլեան, Ա. Ալլահվերդեան 1-ական ր., Տ. Ն. Եզեկիէլեան 60 կ., Գ. Բաբայեան, Ի. Իւղբաշեան, Վ. Առաքելեան, Բ. Գասպարեան, օր. Գ. Ցարութիւնեան, Ա. Ալլահվերդեան, Ս. Գասպարեան 50-ական կ., Ս. Մալխասեան 45 կ., Գ. Խաչատրեան 40 կ., զինուոր Գրիգոր, զինուոր Տիգրան, Ս. Խաչատուրեան, Թ. Արզումեան, Գ. Իսայեան, Ա. Բաբայեան, օր. Ե. Իւղբաշեան, Մ. Իսախանեան 30-ական կ։ Գումարը 36 ր. 35 կ։

## ԱՌԱՋԻԿԱՑ ԹԱՏԵՐԱՇՐՋԱՆԻ ԱՌԻԹՈՎ

Վաղը, երկուշաբթի օր, ամսս 21-ին բացվում են մայրենի թատրոնի դռները հասարակութեան համար։ Ներկայ թատերաշրջանը շատ խիստ կերպով տարբերվում է նախկին թատերաշրջաններից գործի կազմակերպութեան տեսակէտից։ Առաջիկայ թատերաշրջանին ներկայացումներ տալու գործը տարվում է ոչ թէ զեկավարութեամբ Հ. Դրամատիկական Ընկերութեան վարչութեան կամ խորհրդի, ինչպէս նախկին տարիներն է եղել, այլ հենց դերասանների, այսինքն նրանցից կազմված ընկերակցութեան։ Այսպիսի մի փորձ էլ տեղի ունեցաւ, որքան յիշում եմ, 1909 թուին, որը շատ անաջող վախճան ունեցաւ նիւթական տեսակէտից՝ ինչ-ինչ հանգամանքների պատճառով։

Ներկայումս էլ, ինչպէս և 1909 թ., դերասանական ընկերակցութեան կազմակերպութեան պատճառը եղել է դրամական միջոցների պակասութիւնը։ Ինչպէս յայտնի է, Հ. Դրամատիկական Ընկերութիւնը ստանում է իւրաքանչիւր տարի դրամական նպաստներ մայրենի թատրոնի նախանձախնդիր մեր հարուստ բարեգործներից։ Այդ դրամական նպաստները միջոց էին տալիս Ընկերութեանը կազմակերպելու դերասանական խումբ, վարձելու թատրոն, հոգալու այլ ծախքերը, մի խօսքով թատերաշրջան պահելու։ Սակայն տարեց-տարի տեղ խրոնիքական բացերը հասցրին Ընկերութիւնը անանկութեան դուռը։ Ծախսվում էին Ընկերութեան անձեռնմխելի գումարները, և վարչութիւնները ստիպված էին լինում իրանց օգնի ու միտքը զբաղեցնել միմիայն ծախսված գումարները լրացնելու գործով։

Դրամական բացերի առաջանալու պատճառները, չը նայելով տարեկան խոշոր նպաստներին, են՝ ամենից առաջ մեր հասարակութեան քաջ անտարբերութիւնը դէպի մայրենի բեմը, երբ շաբաթական միջին մուտքը 400-ի էլ չէ հասնում, երկրորդ՝ դերասանական խմբին տրված ռոճիկները, որոնց գումարը նախահաշիւ արված թվից մշտապէս շատ բարձրացել է, և երրորդ՝ թատրոնին տրված մեծ վարձը։

Քանի որ գոյութիւն ունեն վերոյիշեալ պայմանները, Հ. Դրամատիկական Ընկերութեան նիւթական միջոցները երբէք չեն բաւի գնել, ինչպէս ասում են, ծայրը ծայրին հասցնելու։ Ահա այս դրութեան մէջ էր գործը, այս տարի ևս, երբ Ընկերութեան առաջ ցցվեց թատրոն պահելու և չը պահելու հարցը։ Ընկերութեան մնացորդ ազատ գումարն այնքան չնչին էր, որ անցեալի փորձերի օրինակով ոչ մի կերպ հնարաւոր չէր դերասանական խումբ ունենալ։ Եւ ահա դերասանութիւնը յանձինս իր լաւագոյն օյժերի ընդառաջ եկաւ Ընկերութեան՝ մայրենի բեմի դուռը չը փակելու համար։ Կազմակերպվեց դերասանական ընկերակցութիւն ղեկավարութեամբ դերասաններ Սեւումեանի, Աբելեանի և դերասանուհի Սիրանոյշի։ Այդ ընկերակցութիւնը, ստանալով մօտ 4000 ր. դրամական օժանդակութիւն Հ. Դրամատիկական Ընկերակցութիւնից, պահելու է առաջիկայ թատերաշրջանը իր նախաձեռնութեամբ ու պատասխանատուութեամբ։

Ողջունում ենք դերասանական ընկերակցութեան այդ գեղեցիկ քայլը։ Ընկերակցութիւնը վճռել է ամեն զրկանք ու նեղութիւն կրել, միայն թէ մայրենի բեմի գոյութիւնը յարատեւ թիֆլիսի պէս հայաշատ քաղաքում, որտեղ մինչև իսկ թուով պակաս այլազգիներն ունեն իրանց թատրոնը։

Ընկերակցութեան մէջ են այնպիսի օյժեր՝ ինչպէս ս. Սիրանոյշ, Աբելեան, որոնք գրական են, որ բեմական աջողութիւնը խաղի և բեմերաւարի տեսակէտից ապահովված է. մնում է միայն, որ հայ թատերասէր հասարակութիւնը մեծ թուով յաճախէ իր մայրենի բեմի ներկայացումներին, ցոյց տալու որ հասկանում է նրա գոյութեան անհրաժեշտութիւնը մեզ պէս դժբաղդ ժողովրդի համար։ Վաղվանից, այսինքն երկուշաբթի օրվայ առաջին ներկայացումից հայ դերասանական ընկերակցութիւնն ուզում է ասել հասարակութեան, որ ինքը վճռել է ամեն կերպ վառ պահել մայրենի ճրագը և միայն թատերասէր հասարակութեանն է մնում որոշելու, թէ ուզում է ունենալ մայրենի բեմ թէ ոչ։ Դա միայն պէտք է հասարակութիւնը հաստատէ, այո կամ ոչ, երբ իր ներկայութեամբ ներկայացումներին կը լցնէ թատրոնը, ցոյց տալու որ սիրում է և պահանջ է զգում մայրենի թատրոնի, կենդանի մայրենի լեզուն լսելու բեմից։

Եթէ այս տարի ևս գործն անաջող վերջանայ և վտանգվի հայ թատրոնի գոյութիւնը, մեղաւորը լինելու է միայն և միմիայն հայ հասարակութիւնը։ Ցաւոտ ենք, որ այդ չի լինի։ Հայ հասարակութիւնն այնքան է գիտակցում իր պարքը դէպի հայ թատրոնը, որ վաղվանից կը շտապէ թատրոն հակառակը հաստատելու։

Կալխաս

## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ

Որովհետև բազմաթիւ դէպքեր են լինում փախստականների ընտանիքներին իրարից բաժանելու, ինչպէս, օրինակ, ճանապարհին ծնողները երեխաներին են կորցնում, երեխաները ծնողներին, մարդը կնոջը, կինը մարդուն և այլն, այդ պատճառով զեմստվային և քաղաքային միութիւններին կից փախստականների տեղաւորութեան բաժանմունքը անհրաժեշտ է համարել սահմանել կենտրոնական տեղեկատու բիւրո փախստականների համար։ Հարցումների համար բաժանմունքը մշակել է առանձին թերթիկներ, որ ուղարկել է զեմստվային և քաղաքների Միութիւնների շրջանային, նահանգական և գաւառական կոմիտէներին՝ ուղարկելու բոլոր այն հատատութիւններին, որոնք վարում են փախստականների օգնութեան գործը, և բաժանելու այն անձանց, որոնք ցանկանում են տեղեկութիւններ իմանալ կենտրոնական բիւրոյում։

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՖԼԻՍ

✦ Հաստատապէս յայտնում են, որ Կովկասի նոր Փոխարքայ Նորին Բարձրութիւն Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչը Թիֆլիս կը ժամանի սեպտեմբերի 23-ին՝ չորեքշաբթի օրը։ Մեծ Իշխանին դիմաւորելու համար երէկ Բաստով մեկնեց Փոխարքայի զինուորական մասի օգնական գնդապետ Ն. Ն. Եանուշկևիչը։

✦ Երէկ առաւօտեան Էջմիածնից Թիֆլիս եկան Ցաւսիկ արքեպիսկոպոս և Բարգէն վարդապետ, որոնք, ինչպէս հաղորդել էինք, եկել են Կովկասի նոր Փոխարքայ Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչին ողջունելու Կաթողիկոսի անունից։

✦ Ոստիկանապետը շրջելով քաղաքի շուկաները և առևտրական եւուն եռեղը և անձամբ համոզվելով, որ ամեն տեղ հաւասար հսկողութիւն չը կայ առևտրի և շուկաների վրա, հրաման է արձակել, որ բացի պրիստաւներից շուկաների վրա հսկողութիւն ունենան և թաղական աւագ հսկիչները և այս մասին յայտնեն ազգաբնակութեան լայն խաւերին, որ նրանք վաճառականների օրինաղանցութիւնների համար դիմեն ոստիկանութեանը և այն դէպքում, երբ դժուարութիւն զգան ապրանք ձեռք բերելու։ Այնուհետև ոստիկանապետը հրամայում է խուզարկել թագցված ամեն տեսակ ապրանքներ և գտնելու դէպքում գոյութիւն ունեցող սակագնով վաճառել ազգաբնակութեանը և թագցնողների վրա էլ արձակութեան կազմել պատասխանատուութեան ենթարկելու։ այդպէս վարվել և այն դէպքում, երբ մթերքները սակագնից բարձր գնով վաճառվելիս լինեն։ Եռաց ամեն օր առաւօտները ձիաւոր քաղաքապահներ ուղարկել քաղաքից դուրս՝ գիւղացիների մթերակիր սայլերը ուղղող շուկաները բերելու, թայլ չը տալով ուրիշ տեղ գնալու, իսկ այն մարդկանց, որոնք գիւղացիներից գնում են և վաճառականներին վաճառում, կամ մթերքութիւն են անում և այլ այդպիսի գործեր, դրանց ձերբակալել, ներկայացնել իրան՝ ոստիկանապետին, համապատասխան արձանագրութեան հետ միասին, օրինական պատասխանատուութեան ենթարկելու համար, և, ի վերջոյ, տեղեկացնել իրան այն անձանց անգործունէութեան մասին, որոնք օրէնքով պարտաւոր են հոգ տանել ուտեստի մթերքների պակասութեան վրա։

✦ Վարշավայի պոլիտեխնիկումը Թիֆլիս փոխադրելու մրցակիցներ հանդիսացում են Սարատով և Օդեսսա։ Բացի դրանցից միջնորդութիւն են յարուցել հեռեալ քաղաքները՝ Եարսլավլ, Եկատերինոդար, Օմսկ և Օրենբուրգ։ Պոլիտեխնիկումը այս կամ այն քաղաքը փոխադրելու հարցը կախված է գլխաւորապէս այն բանից, թէ քաղաքներից որը ամենաշատ նպաստ կը տայ պոլիտեխնիկումին։

✦ Աղջկանց գիմնազիաների և պրոգիմնազիաների մանկավարժական խորհուրդներին առաջադրված է յարգելի պատճառներով ընդունել այն երեխաներին, որոնք սահմանված տարիքից աւել կամ պակաս հասակ կունենան։

✦ Երկուշաբթի, ամսս 21-ին, բացվում է հայկական ներկայացումների թատերաշրջանը Շերլանդաղէի «Կործանվածը» պիէսով։ Ներկայացումները նախկին տարիների նման տրվելու են Արտիստական Ընկ. թատրոնում։

✦ Այսօր, սեպտ. 20-ին, աղնուականութեան պատգամաւորութեան շէնքում շարունակվելու է Թիֆլիսի նահ. աղնուականութեան արտակարգ ժողովը երկու պատուիրակ ընտրելու, աղնուականութեան հանդամանքներից Գեն. Խորհրդի համար 6 անդամ ընտրելու համար։

✦ Այսօր առաւօտեան ժամը 10½-ին քաղ. դումայի դահլիճում կը կայանայ Հայ Օրիորդների Կոմիտէի նիստը։

✦ Կ. Հ. Բարեգ. Ընկ. Վլադիկավկազի ճիւղը յօգուտ փախստականների կազմած համերգից ստացել է 2000 ր., որիսկ գումարը ուղարկել է Թիֆլիսի Խորհրդին։

✦ Հոկտեմբերի կէսերին Թիֆլիս է գալու դասախօս Վ. Վ. Զոլոտարով և կարդալու է երեք դասախօսութիւն հետեւեալ նիւթերի մասին. 1) «Սերը-բոլգարական Մակեդոնիան», 2) Սերը-բոլգարական յարաբերութիւնները» և 3) «Պուշկինի քաղաքական և հասարակական աշխարհահայեացքը»։

✦ № 40 հիւանդանոցում նոր ընդունվել են խոլերայով երկու հիւանդ։ Հիւանդանոցից առ այժմ դուրս եկողներ չեն եղել։ Ինչպէս երևում է հիւանդանոցի տուած թուերից, խոլերայով հիւանդանալու դէպքերը նուազել են սկսել վերջին օրերս։

✦ Թիֆլիսի կանանց բարձր դասընթացներում զբաղմունքները սկսվում են սեպտեմբերի 21-ին։ Կիրակի օրը, 20 ին, այդ առիթով կը կայանայ մաղթանք։

✦ Սեպտեմբերի 18-ին Թիֆլիսում ըստացվեց ալիւր՝ 10 վագոն, փայտ՝ 1 վ., կովի իւղ՝ 1 վ., նաւթ՝ 2 վ., ձկնեղէն 2 վ., փայտեղէն 2 վ., և բամբակ՝ 1 վագոն։

✦ Ստացանք «Տարազի». օգոստ.-սեպտ. № 8—9, որ մեծ մասամբ նուիրված է լեհացիներին, Հ. Սենկեվիչի ծննդեան 70 ամեակի առիթով։ Կան մի շարք ուշագրաւ յօդուածներ. հանդէսը զարդարված է Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայևիչի, կոմս և կոմսուհի Վորոնցով-Դաշկովների, Ներսէս եպ. Խաչատրեանի, Սենկեվիչի, Ֆր. Շոպէնի, հանգուցեալ դերասանուհի Սաթենիկ Ադամեանի և այլ պատկերներով։ Հանդէսը ընդհանրապէս հաճելի տպաւորութիւն է թողնում։

✦ Մեզ խնդրում են տպել, որ Դ. Ղազարեանի և Ե. Սարդարեանի «Մրցական երգեցողութեան ընկերութիւնը» վերսկսել է խմբական երգեցողութեան գործը։ Փորձերը տեղի են ունենում Գրական-Գեղագիտական Սալոնում (Головинскій, № 41).

Խմբագիր-հրատարակիչ՝

Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Печатать дозволено военной цензурой.

## ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ


# ՄԻԱՅՆ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ՀԱՄԱՐ

## ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

**ԲՈԼՈՐ ԵՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԿՈՐՑՐԵԼ, ԵՆ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՌԱՆԴԸ**

**Բոլոր երանց, ովքեր տառապում են թուլութիւնից,** ինձ մօտ պատրաստած է պատեհ, որ բերում է և ուրախութիւն և յոյս։ Ամենքի համար ունեմ հրաշալի միջոց, որոնց ջղերը բոլորովին քայքայված են վատ սովորութեան հետանքով՝ կամ ամենատարբեր պայմանների շնորհիւ, որպէս «ԱՄՐԻՊԴԱ»-ի հնարողը, պարտք եմ համարում հնարաւորութիւն տալ իւրաքանչիւր անուժին, ջղային մարդկանց փորձել **բոլորովին ձրի.** հաւատացած եմ, որ նա կը բերի առողջութիւն և բաղդաւորութիւն նրանց, ովքեր զոհվում են։

Իմ միջոցը **բարեբարութիւն և ամենօրի համար,** նա բերում է իւրաքանչիւրին առողջութիւն և ոյժ. իսկ նա բացառապէս ներգործող է այնտեղ, որտեղ գործը հասնում է սեռական օրգանների բուժման և ամրացման, առողջացնելով բոլոր ջղերի յօրինակարգը. նա գործադրվում է մեծ աջողութեամբ, երբ թուլութիւնը լինում է հետանք ոգելից ըմպելիների, ծխախոտի և թղթախաղի չափազանց գործածութիւնից և սեռային զրկումներից, նաև ծածուկ վատ սովորութիւններ, որոնք մնասում են սեռային կարողութիւնը. նոյն իսկ վատ սովորութիւններ, որոնց իւրաքանչիւրը ոչ չէ կարող վատ ասել, երբեմն անչափ մնասակար են ներգործում ջղային և սեռական գործարանների յօրինակարգի վրա, այդպէսի սովորութիւնները պէտք է վերացրել մուգ թէյի, սուրճի և այլ վատ անդի և այլն և այլն։

Նրանցից շատերը, ովքեր այժմ ատում են կեանքի ամենախիստ պատկերը՝ տառապում են լուսթեամբ և լաց են լինում իրանց երիտասարդական սխալների համար, իմ միջոցը տալիս է այն շատախոյ ուրախութիւնը, որին նրանք ջերմագին ձգտում են։

«ԱՄՐԻՊԴԱ»-ն՝ ամեն հասակի համար գործածական է։ «ԱՄՐԻՊԴԱ»-ն՝ բուժելու ազբիւրն է։ Նա տալիս է սեռական օրգաններին ոյժ նոր կեանքի համար։ Ընախորժ ձշանները, որոնք սովորաբար առաջ են բերում թուլութիւն, անյայտանում են առանց հետքի, չը կայ այլևս ծանրութիւնը, անհանգիստ քունը, տրամութիւն և ուրիշ անհաճոյ զգացողութիւնները։

**ՈՒԶԱՐԿՎՈՒՄ Է ՁՐԻ**

«ԱՄՐԻՊԴԱ»-ն թոյլ մարդուն դարձնում է. առնական և կայտառ՝ որպէս պատանի։ Ով ընկած է յուսահատութեան մէջ, կարող է զրել ինձ, հաստատ հաւատալով, որ կուղարկեմ նրան **միջոց, որով նորից կը դայ նոյն ուժն ու ամրութիւն։** Գործածելով այդ միջոցը, դուք կը զգաք 10—30 տարի աւելի երիտասարդ. իւրաքանչիւր որ, ով դիմում է ինձ, կարող է նկատի ունենալ միշտ լուրջ վերաբերմունք, միայն պէտք է զրել նամակ, ներփակելով ուղարկելով 3 հատ 7 կոպ. մարկաներ պօստի ծախքի համար. ես կուղարկեմ «Ամրիպդա»-ի նմուշը խնամքով ծրարած՝ այնպէս, որ ոչ ոք չէ կարող իմանալ, թէ ինչ էք ստանում։



Կարտէրը ասում է.— «Էլ մի տառապէք, այլ զրեցէք ինձ և դուք կը ստանաք այն, ինչ որոնում էք»։

Մեր յետագայ և անտարբեր մեր վերաբերվի առաջարկին, այլ շտապեցէք օգտվել յարմար առիթից, որպէսզի առողջանաք։ Իմ հասցէն՝ ГОРАППО КАРТЕРЪ, БОЛЬШАЯ ЛУБЯНКА, домъ 14, ОТД. 65, МОСКВА. Խնդրում եմ հասցէները անուն և ազգանունը գրել ռուսերէն պարզ և որչափ կարելի է մանրամասն և ճիշտ։

**ԱՌԱՆՁՆԱՊԷՍ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ ԴԱՐՁՐԷՔ ԹԷ ԻՆՉ ԵՆ ԳՐՈՒՄ ԻՄ ԳՆՈՐԴՆԵՐԸ**

*Մեծարգոյ պ. ԳՕՐԱՇԻՕ-ԿԱՐՏԷՐ!*

«Ամրիպդա» հարը հրաշալի կերպով բժշկում է սեռական արատները և տալիս է Ձեզ իւրայօրինակարգը (ես դրան հաւատում եմ), փորձել եմ ինձ կատար ազատութիւն օգտվելու իմ անունից։ Ստանալով և ահա թէ ինչպէս ես բժշկեցի սերմի ինքնարտաքսումը, ես գործածեցի 125 հատ, ես ունենալ կնոջս հետ, որ առաջ ունենում էի մեծ դժուարութեամբ։ Այն էլ հազուագիւտ անգամ։ «Ամրիպդա»-ի գործադրումից ետքը ամբողջ տարի մէջ մինչև այժմ ես սեռական թուլութեան և օնանիզմի բուժման համար ես չնորհակալ ական խօսքեր չեմ գտնում Ձեր թանգագին դեղի համար։

*Ցարգելի պարոն ԳՕՐԱՇԻՕ-ԿԱՐՏԷՐ!*

Ուղարկում եմ իմ լուսանկարը և տալիս եմ Ձեզ իւրայօրինակարգը, փորձել եմ ինձ կատար ազատութիւն օգտվելու իմ անունից։ Ստանալով արատհասումը, սկսեցի բնականօրէն յարաբերութիւն որոնցից հրաշալի կերպով կազդուրվեց իմ 21 տարեկան տարիքս։ Ես դարձեալ սեռական օրգանի զմբ։ «Ամրիպդա»-ն ինձ տալիս արժէքաւոր միջոց է սեռական թուլութեան դեմ։

ԱԼԷՔ. ԵԳՕՐ. ԿՈՒԶՄԻՆ։



Ե. ՊԱԼԷԳԼԷ։

*Եթէ Ձեր գնորդներից մէկը չէ հաւատում, թող գրի ինձ, ու ես նրան կը գրեմ, թէ ինչեր եմ քաշել։*

*16 փետրվ., 1913 թ. Ալէք. Եգօրովիչ Կուզմին.*
*Տօմսկ, Նիկոլսկայա, 28։*

*Ցարդանքներով՝*
*Ե. ՊԱԼԷԳԼԷ*

Բանցէն, 10 փետրվարի 1911 թ.։

(հ. 18) 652. 2—1



# ՎԵՐՋ ՄԱՐԴԿԱՆՑ ՏԱՌԱՊԱՆՔՆԵՐԻՆ

## ՏՐԻՊԵՐԻ (սուսունակ) ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

*Սուսունակը մի քանիսի կարծիքով անբուժելի հիւանդութիւն է, իսկ մի մասի էլ թէև բուժելի, բայց պահանջում է երկար ու ձիգ ժամանակ և նիւթական մեծ ծախք, բացի բարոյական տանջանքներից։ Այժմ այդ հիւանդութիւնը բուժվում է մեր շաբաթվայ միջոցում «Ռապիդ» միջոցով, որ ես եմ հնարել և թոյլ է տրված բժշկական խորհրդով № 1295 վկայագրով։*

*Այս միջոցը հինգ տարվայ ընթացքում բուժել է մի քանի հազար հիւանդների և մեծ անուն հանել թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում։ Բայց մինչև այժմ էլ կան հիւանդներ, որոնք կասկածով են վերաբերվում իմ յայտարարութեանը։*

*Այն կասկածները բնական է, որովհետև վերջին մի քանի տարիներում այնքան «հրաշագործ» դեղեր են լի վաճառ հանվել, որոնք շուտափոյթ բուժումն են խոստանում, որ հիւանդը կարդալով յայտարարութիւնները ոչ միայն զբաղվարանում է դրանցից ընտրել, այլ և սկսում է կասկածել նրանց տուած խոստումների վերաբերմամբ։*

*Գուցէ շատ հիւանդներ փորձել են մի քանի դեղեր և գուցէ հիասթափվել նրանց ներգործութեան ու խոստումների վերաբերմամբ, բայց դա չէ նշանակում, որ բոլոր դեղերն էլ այդպէս են։ Իմ առաջարկած միջոցը երեք շաբաթվայ ընթացքում բուժում է այս հիւանդութեանը ամենանացած տեսակը։*

*Հինգ տարվայ ընթացքում ես ստացել եմ մեծաքանակ շնորհակալական նամակներ, որոնք ինձ թոյլ են տալիս յայտնելու, որ «Ռապիդ» գործ ածելու ժամանակ չը բուժելու դէպք չէ եղած և իւրաքանչիւր հիւանդ, որ գործ է ածել երկու կրկնակի սրսուակ «Ռապիդ», անպայման առողջացել է, որքան որ հիւանդութիւնը տևած լինէր։*

*Հիւանդների ուշադրութիւնն եմ հրաւիրում այն հանգամանքի վրա, որ իմ հաւատացումը «Ռապիդ» միջոցի մասին և իմ խոստումները ի զուր չեն, ի հաստատութիւն որի Թիֆլիսի բաժանմունքից ամեն մի 2 սրսուակ ապտրոզի (բուժման ամբողջ կուրսը) ես ձրի ուղարկում եմ դեղի հետ միասին ՊԱՐՏԱԻՈՐԱԿԱՆ ԹՈՒՂԹ, ՓՈՂԸ ԵՏ ԴԱՐՁ ՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ, եթէ գրվողը չը բժշկվի։ Այս թղթի պատճէնը այս է.*

*«Ես, ի ներքոյ ստորագրողս, տալիս եմ այս թուղթը պարոն այս ինչին այն բանի համար, որ ծախելով նրան «Ռապիդ» պրեպարատի 2 կրկնակի սրսուակ հանդրէյի դէմ, երաշխաւորում եմ, որ 20-օրեայ գործածութիւնից յետոյ՝ նրա հիւանդութիւնը բոլորովին կանհետանայ։ Եթէ այդ ժամանակամիջոցում, նրա հիւանդութիւնը, լաթորատորիայում նրա մէզը քննութեան ենթարկելուց յետոյ, բուժված չը լինի, այն ժամանակ 9 ր. պարտաւոր եմ վերադարձնել։»*

*Աւելի լաւ հասկանալու համար ես վերևում ամեն մի յայտարարութեան մէջ տեղաւորել նոյնատեր շնորհակալական նամակներ։ Այս նամակների իսկականները պահվում են ինձ մօտ և ցանկացողները կարող են միշտ էլ տեսնել։ Այս նամակների իսկութեան համար ես պատասխանատու եմ և դրանց կեղծութիւնը ապացուցանելու դէպքում ես պատրաստ եմ վճարել 1000 ր., որևէ բարեգործական նպատակով։*

*Մեծ. պ. Դէլամուրէ! Ես բարոյապէս պարտք եմ համարում շնորհակալութիւն յայտնել Ձեզ «Ռապիդ» դեղի համար, որով ես կատարելապէս բժշկվեցի ի՝ հիւանդութիւնից, որը ինձ չափից դուրս տանջում էր։ Փորձելով «Ռապիդ» դեղը՝ ես զարմացայ նրա բուժարար լինելու վերաբերմամբ։ Իմ մէզը երկու անգամ անալիզի ենթարկվելով՝ պարզվեց, որ ես կատարելապէս բուժված եմ տրիպպէր հիւանդութիւնից։ Խօսք չեմ գտնում արտայայտելու ձեզ իմ խորին շնորհակալութիւնը։ Առանց քաշվելու ամենքին էլ կը յայտարարեմ ձեր «Ռապիդ» դեղի հրաշալի ազդեցութեան մասին։ Խնդրում եմ տալ իմ ներկայ նամակը։ Խորին յարգանքով առ Ձեզ՝*

*Ա. Մ.։ Պօրուսօվօ, Կազանի նահ.։*

*Երկու կրկնակի սրսուակի և մի արկղիկ պիլիւլների (երբ բժշկվելու կուրսը) գինն է 9 ռուբլի։ Վերադիր վճարով և ճանապարհածախսով 10 ռուբլի։ Վերադիր վճարով ուղարկվում է 3 ր. կանխավճար ստանալուց յետոյ։*

*Պատուէրները հասցէագրել միմիայն.*

Въ Кавказское отдѣленіе Московской лабораторіи М. Деламурэ, Тифлисъ, Эриванск. пл., Пушкинская, 3, отд. 2/М, верхній этажъ, противъ Городской Управы' д. Кредитнаго О-ва.

*Հեռագրական հասցէն՝*

Тифлисъ—Американецъ.

(կ.) 609. 50—3



# ПРИ ГОНОРРЕѢ

въ острой и хронической формѣ, а также ея послѣдствіяхъ съ громаднымъ успѣхомъ примѣняется испытанный въ теченіе долгихъ лѣтъ препаратъ

## „АРМАТИНЪ" А. Я. АКУЛІАНЦА

для внутренняго употребленія. „Арматинъ" совершенно безвреденъ для организма и одинаково успѣшно примѣнимъ къ мужчинамъ и женщинамъ. При употребленіи „Арматина" не требуется никакихъ спринцеваній, промываній, прижиганій, бужированій и т. п.

**ПРЕДОСТЕРЕЖЕНІЕ.** „Арматинъ" А. Я. Акуліанца вызвалъ на рынкѣ разнаго рода грубыхъ и вредныхъ для организма поддѣлокъ, а потому просятъ г.г. покупателей быть особенно осторожными при покупкѣ и требовать „Арматинъ" только А. Я. Акуліанца съ этикетомъ бѣлая ромашка. Цѣна 1 кор. 1 р. 75 к. Продажа въ аптекахъ по рец. вр. Аптекамъ, аптек. складамъ, лечебницамъ и пр. лечебн. учрежд.—скидка на главн. складѣ А. Я. АКУЛІАНЦА. Москва, Уланскій п. 21.

(հ. 4.) 174. 0—51



## Ս. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

ՍՏՈՑԳ ՀԱՑՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ քան նոյնգոյն աղբիւրներ, նկարագրդ, գինը 50 կ.։
ՍՇԽԱՐՀԱԲՈՒԹԻՒՆԸ, ընդարձակ նախաբանով լեզուի ուղղագրութեան մասին, գինը 50 կ.։
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԱՑԲԲԵՆԱՐԱՆ և ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ, բազմաթիւ նկարներով և պատկերներով, կազմած լաւագոյն մեթոդով, անհրաժեշտ գիւղական ուսուցիչների համար, գինը 20 կ.։
Բ. ՏԱՐԻ, գինը 40 կ.։
ՌՈՒՍԵՐԷՆԻ ԼԱՒԱԳՈՅՆ ԻՆՔՆՈՒՍՈՑՑՆԵՐ Ա. մաս, գ. 25 կ., Բ. մաս, գ. 40 կ.։
ՌՈՒՍ ՀԱՑ ԼԻՍԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ գ. 9 ր.։
ՀԱՑ ՌՈՒՍ ԼԻՍԿԱՏԱՐ ԲԱՌԱՐԱՆ, գինը 6 ր.։

Գումարով գնողներին զեղչ։

Դիմել հեղինակին՝ А. ДАГБАШЯНУ. г. Тифлисъ. Московская 13 կամ գրախանութներին։ (կ.) 648. 2—2



## Ծախվում են

1) «ՁՆՆԵՐԱԿԱՆ ԵՒ ԴԱՂՏԻ ՑՈՒՆԵՐԻ ԲԺՇԿԱՐԱՆ» նկարներով, բազմաթիւ խորհուրդներով և բէյցպոլով։ Անհրաժեշտ գիրք և պարզ ու հասկանալի գրված ամեն մի չափահասի համար. բազմաթիւ նպաստաւորութեան կանոններ տրիպէրով և այլ ցուցերով չը վարակվելու համար։ Գրքի մէջ կայ նաև սուր և խրոնիկական տրիպէրի և բժշկութեան մասին, բէյցպոլներով։ Գինը 50 կոպ.։

2) «ՓՈՐՁԱՆՔՆԵՐԻ ԱՌՁԵՌՆ ԲԺՇԿԱՐԱՆ», ամեն տեսակ պատահական փորձանքներ, հիւանդութիւններ, թունաւորութիւններ և նրանց շուտափոյթ օգնելը։ Բազմաթիւ անային դեղեր և խորհուրդներ։ Զատ պարզ ու հասկանալի լեզուով։ Ամեն մարդու անհրաժեշտ գիրք զրպանի համար, և ամեն մարդ կարող է մեծ օգնութիւն հասցնել թէ իրա և թէ ուրիշներին։ Գինը 30 կոպ.։

3) «ԹԻԹՆԱՂԻ ՑԿՁՈՒ» ամենալաւ և ծիծաղաշարժ առեկդոտների ու սրախօսութիւնների ժողովածու։ Ծիծաղաշարժ ակձոի պատկերը գրքի երեսին։ Գինը 20 կ.։

Այս երեք գիրքը միասին պատանդողներին

### ԶՐԻ ՈՒՂԱՐԿՈՒՄ ԵՄ ԻՐՐ ՆՈՒԷՐ

երկու հետևեալ գրքերը. 1) «Նիկարմամի չալմաները» ծիծաղաշարժ վոդևիլ չափահասների համար (գինն է 20 կ.), 2) «Բաֆֆի» պատկերով (գ. 10 կ.)։

Գրքերի գինը և ճանապարհի ծախս 20 կոպ. առաջուց ուղարկել անպայման պէրէվոդով։ (Մարկաներ չը դնել նամակներում, հակառակ դէպքում պատասխանատու չեմ ոչ մի կերպ։ Հասցէն՝ Тифлисъ. Семеновская ул. № 9. Мелипинскому фельдшеру А. Г. Есаянцу.

(հ.կ.) 311. 100—39



Շուտով լոյս կը տեսնէն
ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ
**1916 Թ.**
## „ՇԻՐԱԿ" ՊԱՏԻ ԵՒ ԾՈՑԻ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՕՐԱՑՈՅՑՆԵՐԸ

Հարստացած նոր նիւթերով և պատկերներով։ 655. 2—2



Նոր լոյս տեսաւ
Մ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ
## Մեթոդական ժողովածու — Թուաբանական խնդիրների —
II տարի 5-րդ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՄԲ։
Դիմել Թիֆլիսի գրավաճառներին։
(կ) 650. 2—2



Ս.-Պետերբուրգի Պետական Կոնսերվատորիայի Գեղարուեստական Խորհրդի
ԴՐՈՒԱՏՄԱՆ ԱՐԺԱՆԱՑԱԾ
Հայ դպրոցների III և IV բաժանմունքների
## ԵՐԳ-ՀԱՅՆԱԳԻՐՈՒԹԵԱՆ ԴԱՍԱԳԻՐՔ
Առաջարկում ենք մեր
## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԱՅԲԲԵՆԱՐԱՆԸ
Ա. մաս՝ դիատոնիզմ. — Գինը 35 կոպէկ.։
Դիմել բոլոր հայ գրավաճառներին։
Պահեստը Ա. Մանուկեանի մօտ. հասցէն՝ Գայիանեան դպրոց։
ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ, ԱՂԱՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
(կ. հ.) 620. 8—4



Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան հսկողութեան ներքոյ
## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐ
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԵՐԿՍԵՌ ԱՆՁԵՐԻ ՀԱՄԱՐ
(Թիֆլիս, Միխայլովսկի պր., № 24, տել. № 9—76.)
Խնդիրների ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ից։ Ծրագիրները ու կանոնները ուղարկվում և տրվում են ձրիաբար՝ կուրսերի դիւանատնից։
(կ. հ. հ.) 480. 0—26



## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՐԳԱՒՈՒՆԴԵՐՈՎ ԵՒ ՀԱՇԻՄՊՇԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
ՅՈՎՀ. ԶԱՔ. ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻ
Ընդունելութեան քննութիւնները օգոստոսի 24-ից։ Պարապմունքների սկիզբը՝ ուսումնարանում—սեպտեմբերի 1-ից, կուրսերում—սեպտ. 15-ից՝ I Тумановская ул. с. д. № 31
640. 10—6



Առեւտրի եւ Արդիւնաբեր. Մինիստրութեան իրաւասութեան ներքոյ գտնվող
## Հայրապետական Կուրսեր Գ. Կ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑԻ
Թիֆլիս, Նիկոլայէվսկայա փող., № 36,
Նոյն տեղը ՊԱՆՍԻՕՆ Մ. ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆՑԻ
Ընդունվում են աշակերտներ լրիւ պանսիոնով, դասերի պատրաստութեամբ և առանց խնդիրների ընդունելութիւնը երեկոյեան ժամը 3—7-ը։
(հ. հ. շ. կ.) 541. 50—21



«ՄՇԱԿԻ» ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ Է
Ա. ՔԱԼԱՆԹԱՐԻ կազմած
## ՍԱՍՈՒՆԻ ՔԱՐՏԷԶԸ
փոքրագիր։ Հատը 5 կոպէկ։ Ճանապարհածախքով հատը 8 կ.։ Գումարով գնողներին զեղչ



Եղեսիայի եկ.-ծիս. տպագոյ քառամեայ և օր. նոստեայ դպրոցների համար հարկաւոր է
## ՄԻ ՈՒՍՈՒՑԻՉ
միջնակարգ կրթութեամբ. շաբաթական կունենայ 25 դաս և հերթ. վերակացութեան պաշտօն տպագոյ դպրոցում 3 օր։ Տարեկան ռոճիկ 450 ր., սենեակ, ծառայ և վառելափայտ։ Ստանձնող ուսուցչին ռոճիկը կը տրվի պաշտօնավարելուց սկսած. իսկ սեպտեմբերի 1-ից մինչև այն օրը յիշեալ տարեվճարից դուրս կը բերվի չը պարապած դասերի համար հասանելիք գումարը։

Ցանկացողները թող անյապաղ դիմեն հետևեալ հասցէով՝ Черезъ гор. Моздокъ, въ м. Эдиссію, Эдиссійскому Армянскому церковно-приход. Попечительству.

659. 3—2



Նոր լոյս տեսաւ
## Ս. ԳԱՐԵԳԻՆ ՀԱՅԿԱԶՆԻ
## ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ
Գրական ուսումնական գրքոյկ։ Գինը 50 կոպ.։
Դիմել հեղինակին՝ Тифлисъ. Ереванская ул. № 3. Ереванскій этажъ, противъ Городской Управы.
(կ.) 609. 50—3



# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ
ԻՆԺԵՆԵՐ
## Տ.Ա. ԲՈՒԴԱՂԵԱՆԻ
Բազու, Կրասնօվոդսկայա փ. տ. Աւան-Իւզբաշեանցի։ Հեռախօս № № 23-49, 23-50

Առաջարկում է ամբողջ Կովկասի և Պարսկաստանի համար իսկապէս Դիզել շարժիչներ (մոտորներ) յայտնի ԿՕԼՕՄԵՆՍԿԻ ընկ. մեքենայագործարանից։
Հօրիզոնական անգլիական շարժիչներ, (մոտորներ) «ԿԻՐՕՍՍԼԷԾ» ընկերութեան մեքենայագործարանից «Դիւրացրած Դիզել» սիստեմի, որ գործ է ածվում նաւթի բոլոր տեսակներով. նաւթի ծախսն է մի ժամում ամեն մի օյժին 1/2 ֆունտ կամ 200 գրամմ։
Գաղային շարժիչներ, որոնք բանում են թէ բնական և թէ գեներատորային գազով։
Ջրհան և ջրմուղ մեքենաներ (նասոսներ)։
Ջրի շարժիչներ (տուրբինաներ)։
Ամեն տեսակ պատրաստող մեքենաներ «Ֆէնիկս» ընկ. գործարանից։
Ամեն տեսակ էլեքտրական մեքենաներ և պիտոյքներ յայտնի «Դինամո» ընկ. գործարանից։
Երկրագործական մեքենաներ՝ լոկոմոբիլներ, ցորեն մաքրող մեքենաներ, արաքատներ և այլն՝ յայտնի ամենայն ամերիկեան «ԿԷՅՍ» (Case) ընկեր. գործարանից։
Մեծ ճանապարհի վրա աշխատելու համար ԱՒՏՕՄՕԲԻԼՆԵՐ նոյն ամերիկեան «ԿԷՅՍ» (Case) ընկերութեան գործարանից։
Վերոյիշեալ տեխնիկական գրասենեակը իր վրա է վերցնում զանազան գործարաններ սարքել և գործի դնել իր միջոցներով՝ ինժենէրներով և վարպետներով։
Դիմել՝ Баку, Техническая Контора Т. А. БУДАГЯНЦЪ.
Արտասահմանից՝ Bacou (Russie) Bureau Technique T. A. Boudaguian, Ingénieur.
(հ.կ.) 551. 150—132


Типографія Канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.